

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԴԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ



ԱՇՈՏ ՀՈԿԳԱՆՆԻՄՅԱՆԻ ԱՆԿԱՆ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՐՔ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԻՐԱՆՈՒՇ ԴՎՈՅԱՆ

Այրվող այգեստաններ վեպը քայքայվող ընտանեկան ու
նորոգվող ազգային կապերի միջև

ԵՐԵՎԱՆ 2022

Ներածություն

Գուրգեն Մահարու որբական փորձառության ներքին լարումներից 1960-ական թվականներին ծնված *Այրվող այգեստաններ* վեպը հեղինակի իսկ ստեղծագործական աշխարհում ի մի է բերում հայրենի Վանը գրականությամբ փրկելու 1930-ական թվականներին սկիզբ առած ոգորումները: Վեպը հրապարակ էր իջնում մի շրջանում, երբ Խորհրդային Չայաստանի հանրային կյանքում օրակարգային էր ցեղասպանության հիշողության կառուցումն ու սրան սերտորեն կապված ազգային հարցի վերանայումը: Այս համատեքստում Մահարին «վերադառնում» է 1930-ական թվականների գեղարվեստական իր մտահղացմանը՝ ավարտին հասցնելով հայրենի տան կորուստը գրականությամբ վերապրելու որբական իր փորձառությունը: Քննարկելով արդիացման ուղին բռնած հայության մի հատվածի կյանքում քաղաքական կուսակցությունների գործունեությամբ ի հայտ եկած բարդությունները՝ գրողն ազգային ազատագրության թեման ծավալում է անձնական իր փորձառության՝ քաղաքական տարածայնություններով պայմանավորված ընտանեկան ողբերգության հետնախորքին: Այսքանով հանդերձ, Մահարին ստեղծում է այնպիսի գեղարվեստական կառույց, որը ազգային կուսակցությունների գործունեության թեման շոշափում է ազգային հեղափոխությանը ծնունդ տված հասարակական-մշակութային կյանքի հետ սերտ կապերի համատեքստում:

Չրապարակ իջած վեպը մեծ հուզումների և սուր քննադատությունների առիթ է տալիս՝ քննադատության արժանանալով այն բանի համար, որ հեղինակը, անտեսելով 20-րդ դարասկզբի ազգային ազատագրական շարժումների շուրջ եղած ժամանակի պատմագիտական գրականությունը, հանգել էր սխալ եզրակացությունների: Քննադատության հիմնական կետն այն էր, որ ազգային կուսակցությունների Վանում ծավալած գործունեությունը հեղինակը «ներմուծված» և ոչ տեղում ծնված էր համարում՝ անտեսելով, որ «անցյալ դարի կեսերից թուրքական բռնակալությունը պետականորեն ծրագրել էր իր կայսրության մեջ բնակվող այլազգիների բնաջնջումն ու ծուլումը, մանավանդ բալկանյան երկրների ազատագրումից հետո»:¹ Այս անկյունից դիտված՝ քննադատությունը հանգում էր նրան, որ «չհասկանալով պատմական իրադարձությունների իմաստն ու ժողովրդի ինքնուրույն պայքարի մշանակությունը, [հեղինակը] հանգել է անընդունելի, հակապատմական ընդհանրացումների, որ իբր հայ ժողովրդի մեծ ողբերգության պատճառը «բզեզների բունը անտեղի կերպով խառնելն է»:

Ազգային ազատագրության այս ընդհանուր՝ գաղափարական քննադատության համատեքստում Մահարին քննադատվում էր այն բանի համար, որ տարվելով կենցաղային մանրուքներով, դուրս էր թողել Վանի հերոսամարտի նկարագրությունը և

¹ «ՀՍԳ Միության քարտուղարությունում», *Գրական թերթ*, 19 մայիսի 1967 թ.: 1960-ական թթ. ազգային ազատագրական շարժումների մասին պատմագիտության մեջ ձևավորված մոտեցումներում երևան էր գալիս այն ընթացումը, որ Օսմանյան կայսրության ներսում հպատակ ժողովուրդների, այդ թվում նաև հայերի ազատագրական շարժումներն իրենց սոցիալական պատճառներից ծնված լինելով՝ միևնույն ժամանակ և անխուսափելիորեն ունեին ազգային բնույթ: Չայերի հանդեպ վերաբերմունքի մեջ տնտեսականի կողքին չէր անտեսվում նաև քաղաքական ու կրոնական հողի վրա հավածանքների խաղացած դերակատարությունը: Պատմաբան Ջոն Կիրակոսյանը, օրինակ, խնդիրն այսպես է ձևակերպում. «Կայսրության ճնշված ժողովուրդների աչքում թուրքական պետական բյուրոկրատիան՝ ո՛չ արտադրող, մակաբույծ, սպառող տարրը, դարեր շարունակ տիրապետելով հանդես էր գալիս և՛ սոցիալական հարստահարիչ, և՛ ազգային ճնշման մարմնավորողի դերում»: Ջոն Կիրակոսյան, *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը* (Երևան: Չայաստան, 1965), էջ 15: Արևմտահայության ազգային ազատագրական շարժումների մասին նույն շրջանում տե՛ս նաև Ռաֆիկ Չովհաննիսյան, *Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը* (Երևան: Չայկական ՍՍՌ ԳԱ, 1965), Չարություն Թուրջյան, *Սարդարապատի հերոսամարտը* (Երևան: Չայաստան, 1965):

«չ[եր] կարողացել տեսնել հայ ժողովրդի բնավորության վեհությունն ու մարդկայնությունը և բացասական, ոչ բնորոշ բարոյական հատկություններով է[ր] օժտել վեպի կերպարներին, դրանով իսկ վիրավորելով հայ ժողովրդի արժանապատվությունը»:² Քննադատությունը հասնում էր նրան, որ «վեպի քաղաքական նպատակադրումը անմիջաբար կապելով հեղինակի գեղարվեստական մտածողության հետ» և արատավոր համարելով «քաղաքական հարցերի մեկնակետը», արատավոր էր նկատում նաև այդ «գաղափարներին ծառայեցված գեղարվեստական մտածողությունը»:³ Ծայրահեղացված այս մոտեցման վեպը մերժվում էր որպես հակապատմական ընդհանրացումների հասած և ըստ այդմ նաև՝ արատավոր գաղափարներ արտահայտող գեղարվեստական գործ ու դուրս դրվում գրական ու հանրային շրջանակներից: Հանրային սուր քննադատությունների ճնշման տակ Մահարին վերանայում է վեպի առաջին հրատարակությունը և 1967-ին, մահվանից կարճ ժամանակ առաջ, ավարտում երկրորդ լրամշակված տարբերակը: Վեպի այս տարբերակը հրատարակվում է հեղինակի մահվանից տաս տարի անց՝ 1979-ին երկերի հրատարակության չորրորդ հատորում:⁴

Այրվող այգեստաններ վեպը խորհրդահայ քննադատներին անակնկալի էր բերել այն պատճառով, որ հեղինակը, լայնորեն տեղ տալով Վանի կենցաղային կյանքին, տեղ չէր տվել ազգային ազատագրական պայքարը ներկայացնելուն ու նսեմացրել վերջինիս նշանակությունը: Ի տարբերություն հայաստանյան շրջանակների, Սփյուռքում վեպն այս անկյունից չի քննադատվում: Վեպի շուրջ եղած անդրադարձների մեծ մասը, փորձելով պաշտպանել Մահարուն և վեպը խորհրդահայ քննադատությունից և գնահատելով այն Վան-Վասպուրականի ժողովրդագրական հարուստ նյութը վարպետորեն պատկերելու անկյան տակ՝ հակվում էին նրան, որ Մահարին, տեղ տալով ընտանեկան դժբախտությանն ու Ռամկավարական շրջանակների ըմբռնումներին՝ միակողմանի վերաբերմունքի էր արժանացրել Դաշնակցության գործունեությունը:⁵ Սփյուռքում վեպը հիմնականում քննադատվում էր հեղինակի անձնական փորձառության տեսանկյունից, այն որ թեև հայրենի աշխարհի հանդեպ կարոտից մղված Մահարին երևակայության ուժով կերտում է «իսկական տիպեր, վիպական անկախ գոյութիւններ, որոնք իրենց ուրոյն կեանքով կ'ապրին հեղինակին ստեղծած վեպի տիեզերքին մէջ», միևնույն է, նրա որդեգրած երգիծական-հեզնական մոտեցումը ջղային ու սուբյեկտիվ է, իսկ մանրուքները ներկայացնելուն խառնված հեզնանքն ու դառնությունն այնքան շատ, որ մի իմաստով «իր հերոսները միաժամանակ իր զոհերն են» դառնում:⁶

² «ՀԱԳ Միության քարտուղարությունում», *Գրական թերթ*, 19 մայիսի 1967 թ.:

³ Մարգո Մխիթարյան, «Գրողը և պատմական ճշմարտությունը», *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1967, թիվ 10:

⁴ Տե՛ս Գուրգեն Մահարի, *Երկերի ժողովածու*, հ. 4 (Երևան: Հայաստան, 1979):

⁵ Մահարուն դատապարտող հայաստանյան քննադատություններին հակընդդեմ գրված հոդվածներից, տե՛ս, օրինակ՝ հեղինակի հետ ազգակցական կապ չունեցող Գեորգ Աճեմյանի հոդվածը, «Ազատութիւնը որպէս բռնութիւն. Գուրգէն Մահարիի «Այրուող այգեստաններու» առիթով», *Սփյուռք*, 27 օգոստոսի 1967 թ., ինչպէս նաև՝ *Նայիրի* պարբերականի, հավանաբար խմբագրի՝ Անդրանիկ Ծառուկյանի արձագանքը, տե՛ս *Նայիրի*, 2 հուլիսի 1967 թ., էջ 3: Նույն համարում Ծառուկյանը հրատարակում է նաև Գրողների միության կարծիքը: Գործը ազգագրական տեսանկյունից գնահատելու, բայց կուսակցական տեսանկյունից քննադատելու համար տե՛ս Խոսրով Թիւթունճեան, ««Այրուող այգեստաններ» (Գուրգէն Մահարի)», *Նայիրի*, 28 մայիսի, էջ 2-3; 25 հունիսի, էջ 2-3; 2 հուլիսի 1967 թ., էջ 2-3:

⁶ Գրիգոր Շահինեան, ««Երկիր Նայիրի», «Կեորես», «Այրուող այգեստաններ»», *Սեւեկան*, 1968, թիվ 2, էջ 26-27: Շահինյանի այս հոդվածից մի հատված տե՛ս նաև *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, <https://bit.ly/3GMIZFK>, այց՝ 10 դեկտեմբերի 2022 թ.: Հղելով վեպում հոր սպանությունը պատկերող դրվագին Շահինյանը նկատում է, որ Մահարու ինքնակենսագրական մյուս գործերի հետ համեմատած այստեղ գրողի վերաբերմունքն ավելի է խստացել քաղաքական գործիչներին ներկայացնելիս: Անմիջական կապ տեսնելով գրողի հոր սպանության ու քաղաքական գործիչների ծաղրանկարային կերպարներ դառնալու միջև՝ Շահինյանը եզրակացնում է, որ «աւելի տրամաբանական է մտածել թե տարիներու ընթացքին հասունցող ատելութեան հետ իր կասկածը վերածուած է ներքին համոզմունքի», էջ 25: Այս առումով ուշագրավ է նաև Շահան Շահնուրի դիտարկումը: Ընդհանուր առմամբ Շահնուրը վեպը գեղարվեստորեն բաժր է գնահատում և

Վեպի շուրջ 1960-ական թվականների երկրորդ կեսին ծավալված այս քննադատություններն ինչ-որ առումով պայմանավորում են նրա հետագա ընդունելությունը թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում: 1980-ական թվականներին արդեն վեպը գնահատող խորհրդահայ ընթերցումները թեև իրենց տեսադաշտից դուրս չեն թողնում այնտեղ ներկայացված կենցաղային կյանքը՝ կարևորելով այն Վանի հասարակական կյանքի տեսանկյունից, բայց շարունակում են հեղինակին ուղղված քննադատությունը ազգային ազատագրական պայքարը ներկայացնելու հարցում:⁷ Մահարու ստեղծագործությանը նվիրված իր մենագրության մեջ գրականագետ Սիլվա Բողոսյանը հետևողականորեն այն միտքն է զարգացնում, որ Մահարին Վանի ազգային-մշակութային և ազգային-քաղաքական կյանքը պատկերող բարդ կառուցվածքով և ներթափանցումներով գործ է ստեղծել: Այս համատեքստում հենվելով *Այրվող այգեստաններ* վեպում կերպարների միջև լայնորեն ծավալվող երկխոսությունների ու ներքին մենախոսությունների վրա՝ գրականագետը Մահարու երկը «տիրող գաղափարների մասին» «ազգային-քաղաքական, սոցիալ-կենցաղային, բարոյա-հոգեբանական վեպ» է համարում:⁸ Ըստ նրա, գործի մեջ լայնորեն ներառնված կենցաղագրությունն ու պատմական փաստերից շեղումներն իրենց տեղն ու դերն ունեն. դրանք ազգային-քաղաքական գծի հետ մեկտեղ կազմում են վեպի ամբողջությունը՝ միավորվելով «մեկ էպիկենտրոնի»՝ «ազգային ճակատագիր» կոչվածի մեջ:⁹

Ընդունելով հանդերձ, որ *Այրվող այգեստանները* վերևի՝ իր բառերով ասած «տիրող գաղափարների» և ներքևի՝ որոշակի բարոյա-հոգեբանական հատկություններով հատկանշվող բնավորությունների փոխկապվածությամբ հանդես եկող կառույց է, Բողոսյանը միևնույն ժամանակ շարունակում է ազգային ազատագրության հարցին վերաբերող Մահարուն ուղղված քննադատության հետագիծը: Գրականագետը նկատում է, որ «ազգային-քաղաքան թեման հիմնականում Դաշնակցական կուսակցության գաղափարախոսության ու գործունեությամբ բեկելով»՝ հեղինակը ուշադրություն չի

հարազատություն նկատում այն հարցում, որ ինչպես ինքը, այնպես էլ Մահարին ազգային կուսակցությունների գործունեությունը գնահատում են արդյունքով: Բայց այսքանով հանդերձ Շահնուրը չի վարանում կասկած հայտնել պատմական դեպքերի հանդեպ հեղինակի որդեգրած հնչեբանագի հանդեպ. «Երբեմն ես ինձի հարց տուի – միթե նախընտրելի չէ՞ որ, այս տեսակ միւթի մը առջև (որ սիրտ *պիտի ծակէ*, ինչ որ ալ ընենք) ի սպաս դուրեք գրութեան այնպիսի շեշտ մը, այնպիսի տօն մը, որ ըլլար նուազ երջանիկ: Խայտանքը, գորովալից քաշքշուքը, բարեմիտ ծաղրը ըլլային առաւել եւս սքօղուած» (ընդգծումը՝ Շահնուրի): Շահնուր, *Նամակահի*, Գրիգոր Քեոսեյան (խմբ.), հ. 2 (Մայրենի, 2004), էջ 74:

⁷ Վեպի առաջին գնահատողներից մեկը, օրինակ, Սուրեն Աղաբաբյանը վեպին նվիրված իր գրախոսության մեջ ընդունելով, որ «Հայ արձակի պատմության մեջ «Այրվող այգեստանները» գեղարվեստական հուշարձան է՝ արժանի բազմակողմանի և խոր հետազոտության», միևնույն ժամանակ նկատում է, որ գեղարվեստական առումով նա այնպիսի մի համայնաբանողակ է, որի էջերում ի հայտ է գալիս Վանը «բնակչության սոցիալական, դավանանքային, ազգային կուսակցական ամբողջական կազմով»: Սրանից ելնելով էլ Աղաբաբյանը եզրակացնում է, որ այն «հոգեբանական-կենցաղային վեպ է Վանի «պատմական անցքերի» ներդրումներով»: Աղաբաբյանը միևնույն ժամանակ արդարացված է համարում այն փոփոխությունները, որոնք կատարել է հեղինակը երկրորդ հրատարակության մեջ: Տե՛ս Սուրեն Աղաբաբյան, «Վիպասքի նոր տարբերակը», *Գրական թերթ*, 29 օգոստոսի 1980 թ.: Գրախոսությունը հետագայում ներառնվել է հեղինակի խորհրդահայ գրականության պատմությանը նվիրված երկահատոր ուսումնասիրության Մահարուն հատկացված բաժնում, տե՛ս Սուրեն Աղաբաբյան, *Հայ սովետական գրականության պատմություն*, հ. 1 (Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ, 1986), էջ 517-559:

⁸ Սիլվա Բողոսյան, *Գուրգեն Մահարի* (Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ, 1981), էջ 151: Գրականագետի վերլուծության այս հատվածն ամբողջությամբ տե՛ս նաև *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, <https://bit.ly/3lwE6By>, այց՝ 10 օգոստոսի 2022 թ.: Բողոսյանն այստեղ Մահարու վեպի առիթով շարունակում է զարգացնել 1970-ականներին Չարենցի *Երկիր Նայիրիին* տրված Սուրեն Աղաբաբյանի բնորոշումները: Աղաբաբյանի մոտեցումների մասին տե՛ս Սուրեն Աղաբաբյան, *Եղիշե Չարենց*, գիրք առաջին (Երևան: Հայկ. ՍՍՀ ԳԱ, 1973), էջ 351-440: Աղաբաբյանի մոտեցումների քննարկման համար տե՛ս Սիրանուշ Դվոյան, «Երկիր Նայիրին կենցաղի ու քաղաքականության միջև», էջ 8-9, *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, <https://bit.ly/3jXBqm8>, այց՝ 10 օգոստոսի 2022 թ.:

⁹ Տե՛ս Բողոսյան, *Գուրգեն Մահարի*, էջ 151:

դարձրել նրան, որ «ազատագրական գաղափարներն ընդհանրապես դարեր շարունակ զոյատևել են հայ ժողովրդի ընդերքում՝ անկախ դաշնակցության «ներմուծումներից»»: Ըստ այդմ Բողոսյանը եզրակացնում է, որ ազատագրական շարժումներն այս համատեքստում դիտարկելիս հայության ազատագրության շուրջ եղած «պատմական ճշմարտությունը կերևար իր ամբողջությամբ»:¹⁰

Վերլուծության այս տրամաբանության մեջ Վանը որպես «տոհմիկ առևտրական քաղաք» և նրա բնակիչներին, մասնավորապես գլխավոր հերոսին՝ Օհանես աղային որպես այդ աշխարհում հաստատված նիստուկացի ու «սոցիալական ձեռքբերովի գծերի» մի խառնուրդ դիտարկելով՝ Բողոսյանն խիստ քննադատական դիրք է գրավում կերպարի բարոյական հատկությունների հանդեպ: Իր իսկ առանձնացրած սոցիալ-հոգեբանական թեմայի վերլուծությամբ երբ հարցը գալիս է կերպարի՝ հայրենիքի ըմբռնումները քննարկելուն, ուսումնասիրողը հանգում է նրան, որ այս թեման ծավալող Օհանես աղայի մոտ հենց կերպարի համար անսպասելի, «սակայն դաժան օրինաչափությամբ կատարվում է մարդկային կործանումը մարդու մեջ, փլվում է այն ամենը, ինչ դարերով բարոյականություն է եղել: Օհանես աղան, իր անձնապաշտության մեջ խրված ու թաղված, հասնում է ցինիզմի գագաթնակետին»:¹¹

1980-ական թվականներին ձևավորված խորհրդահայ ընդունելության տեսական շրջանակն այնպիսին է, որ ընդունելով երկի գեղարվեստական բարդ կառուցվածքը, միևնույն ժամանակ շարունակում է քննադատության տակ պահել ազգային ազատագրության հարցը ներկայացնելու հեղինակային դիտանկյունը: Վեպի այսպիսի կիսաընդունելությունը գնահատանքի արժանացնելով երկը գեղարվեստական տեսանկյունից՝ մեղմում էր 1960-ական թվականներին ձևավորված մերժողական դիրքորոշումը, բայց շարունակում էր գործը խոցելի նկատել ազատագրության թեման ծավալելու տեսանկյունից: Խորհրդահայ 1980-ականների քննադատությունը, փաստորեն, երկի գեղարվեստականությունն ու «գաղափարականությունը» տարանջատում էր միմյանցից՝ շարունակելով քննադատության տակ պահել վերջինս գաղափարական առումով: Վեպն ընթերցելու այս դիտանկյունը գրողի անձնական փորձառության անկյան տակ 2000-ական թվականներին վիճարկել է փորձում սփյուռքահայ մտավորական Մարկ Նշանյանը վեպին նվիրված իր ընդարձակ ուսումնասիրությամբ:¹²

Ելնելով նրանից, որ վեպը միսուարյուն է ստանում կերպարների միջև տարբեր՝ թե՛ հորիզոնական, թե՛ ուղղահայաց մակարդակներում ծավալվող երկխոսություններով՝ Նշանյանն այն տարբեր «բևեռների» (pole) միջև բախումներով կառուցվող բարդ երկխոսական գործ է համարում, որտեղ «իրական պատահարը ներկայացված է անհատական գիտակցության պրիզմայով, կամ ավելի ճշգրիտ՝ թեկուզ լուռ, բայց քննադատական դիսկուրսի միջոցով»:¹³ Նշանյանի ըմբռնմամբ մտածողական այսպիսի

¹⁰ Բողոսյան, *Գուրգեն Մահարի*, էջ 166:

¹¹ Բողոսյան, *Գուրգեն Մահարի*, էջ 193:

¹² Նշանյանի ջանքերով և գրողի որդու՝ Գրիգոր Աճեմյանի աշխատասիրությամբ է հետխորհրդային շրջանում առաջին անգամ վերահրատարակվել վեպի քննական բնագիրը: Տես Գուրգեն Մահարի, *Այրվող այգեստաններ* (Երևան: Ապոլոն, 2004):

¹³ Տե՛ս Marc Nichanian, *Writers of Disaster. Armenian Literature in the Twentieth Century, The National Revolution*, h. 1 (Princeton uLondon, Gomidas Institute, 2002), էջ 124; 130: Նշանյանն այստեղ ելնում է ֆրանսիական իրականություն թափանցած Միխայիլ Բախտինի վեպի տեսության միջնորդավորված ընթերցումից: Այս մասին հեղինակն ինքը նշում է թիվ 62 ծանոթագրության մեջ՝ նկատելով, որ «Երկխոսականությունը նախևառաջ վեպի՝ որպես հակամարտող տրամախոսությունների կազմակերպման եղանակն է»: Ըստ նրա՝ վեպը «զգայուն վերաբերմունք ունի տրամախոսական չափման հանդեպ»: Ուստի կարիք չզգալով քննարկել Բախտինի վեպի երկխոսական բնույթին վերաբերող տեսությունն ամբողջությամբ, Նշանյանը Մահարու մասին հետազոտությունը որպես մի հնարավորություն է նկատում «ստեղծելու շատ

կառույցը հնարավորություն է տվել Մահարուն հրապարակ բերել հայրասպանության ընտանեկան թեման և ծավալել այն 20-րդ դարասկզբի հայության կյանքում քաղաքական կուսակցությունների գործունեությամբ ի հայտ եկած երևույթների՝ «եղբայրասպան պատերազմի» և «հայրական աղետի» համատեքստում:¹⁴

Թե՛ եղբայրասպան պատերազմը, թե՛ հայրական աղետը Նշանյանը քննարկում է հղացական նույն դաշտում՝ որպես քաղաքական տարբեր բևեռների միջև բախումներ, և ընդահանրացնում որպես հայության կյանքը պայմանավորած և անդառնալիորեն շարունակվող մեծ իրադարձություն, իր խոսքով ասած՝ Աղետ: Այս համատեքստում անդրադառնալով վեպի խորհրդահայ ընդունելությանը՝ հեղինակը նկատում է, որ վեպի դեմ ծավալված գրաքննական արշավն ըստ էության շարունակությունն էր դեռևս դարասկզբին քաղաքական կուսակցությունների միջև ծավալված այն հակամարտության, որի աղետալի հետևանքների մեջ շարունակում է ապրել հայությունը:¹⁵ Նշանյանի դիրքորոշումն այն է, որ Մահարու դեմ ծավալված գրաքննական արշավը, անգիտանալով հեղինակի ընտանեկան անցյալը՝ վեպով եղբայրասպանության վերաճած ամենական հոր և դաշնակցական քեռու միջև հակամարտությունը «վերախաղարկելը», կրկնում է «եղբայրասպան պատերազմով» սկիզբ առած քարոզչական պատերազմի ընդհանուր շրջագիծը:¹⁶

Նշանյանը, փաստորեն, ուշադրություն հրավիրելով վեպի՝ անձնական փորձառության հենքի վրա աշխատող գեղարվեստական փորձառության վրա, գործի տեսական մոտ շրջանակ է առաջարկում: Այս համատեքստում սփյուռքահայ մտավորականի հիմնական փաստարկումն այն է, որ համընդհանուր աղետի մեջ կողմ ունենալու հնարավորությունից զրկված՝ Մահարին «Աղետին մոտենալու համար ստիպված էր դիրք գրավել քարոզչական պատերազմի մեջ և, դիմելով հեզանքին, ռիսկի էր ենթարկում «քաղաքական» կեցվածքը»:¹⁷ Մահարու երգիծանքի ընտրությունը ընտրություն կատարելու բացակայությամբ բացատրելով՝ ուսումնասիրողը միևնույն ժամանակ նկատում է, որ անհնարինության այս կետում է Մահարին կարողանում քարոզչական պատերազմից անդին անցնել և հեզանքին դիմելով լուծել սեփական հողի վրա գործելու Արմենական կուսակցության պարտությամբ ծնունդ առած անվերջանալի հուսահատությունից սերող ներքին քինախնդրությունը:¹⁸ Նշանյանի քննարկմամբ ուղիղ կապի մեջ են հայտնվում

նման, եթե ոչ նույնական հասկացություններ», «հղացական համակարգ», որոնք ըստ նրա՝ անհրաժեշտ են «հասկանալու համար, թե ինչ է պատահել Մահարու վեպում», էջ 177: Նշանյանի ուսումնասիրության կարծ մի տարբերակ նախապես հրատարակվել է 2000-ին, տե՛ս Marc Nichanian, «The Flames of Van», ըստ՝ Hovannisian, Richard G. (խմբ.), *Armenian Van/Vasporakan* (California: Mazda Paublisher, 2000), էջ 259-296:

¹⁴ Տե՛ս Nichanian, *Writers of Disaster*, հ.1, էջ 134: Նշանյանը հղում է ֆրանսերեն «catastrophe partemelle»-ին և թիվ 76 ծանոթագրության մեջ բացատրում, թե ինչ է նկատի առնում «հայրական աղետ» ասելով: Դա այն դրությունն է, երբ հայրության տեղը ջախջախված է որդու մեջ: Այլ կերպ ասած՝ որդին անկարող է ստանձնել հայրությունը, քանի որ վերջինս իսպառ ջնջվել է աղետով: Հայրականության խախտման թեման լայնորեն ծավալված է սփյուռքահայ գրականության առաջին շրջանում: Այս մասին տե՛ս, օրինակ՝ Մարկ Նշանյան, *Պատկեր, պատում, պատմություն*, հ. 2 (Երևան: Ակտուալ արվեստ, Հովհաննիսյան ինստիտուտ, 2016), էջ 412-465, ինչպես նաև՝ Siranush Dvoyan, «Representation of Loss in French-Armenian Diaspora Literature», ըստ՝ *Critical Approaches to Armenian Identity in the 21st Century: Vulnerability, Resilience and Transformation* (Istanbul: Hrand Dink Foundation, 2021), էջ 248-256:

¹⁵ Տե՛ս Nichanian, *Writers of Disaster*, հ. 1, էջ 143-144:

¹⁶ Նշանյանն այստեղ, հիմնականում հենվելով հուշագրությունների վրա, բավականին հանգամանալից քննարկում է 20-րդ դարասկզբին Վանում գործող Արմենական և Դաշնակցական կուսակցությունների միջև հակամարտությունը: Տե՛ս Nichanian, *Writers of Disaster*, հ. 1, էջ 147:

¹⁷ Nichanian, *Writers of Disaster*, հ. 1, էջ 146:

¹⁸ Տե՛ս Nichanian, *Writers of Disaster*, հ. 1, էջ 146: Ցեղասպանության հետևանքներից մեկը հայության կյանքում ծնունդ առած քինախնդրության զգացումն է, որը տարբեր կերպ արտահայտվել է Սփյուռքում ծնունդ տալով նաև ներքին տեռորի: Այս մասին ուշագրավ է Խաչիկ Թեղեղյանի մի հոդվածը, տե՛ս Khachig

վեպի հղացքն ու Մահարու անձնական ընտանեկան փորձառությունը: Ընթերցման այս շրջանակում հայության կյանքը պատուհասած քաղաքական իրադարձությունների հետնախորքին հղացված վեպը որպես գեղարվեստական փորձառություն սերած լինելով քաղաքական փորձառությունից հակընդդեմ է աշխատում նրան:

Եվ այսպես, եթե վեպի խորհրդահայ ընթերցումների համար անհաղթահարելի մարտահրավեր էր հանդես գալիս վեպում պատկերված կենցաղային կյանքի ու ազատագրության գաղափարների միջև փոխկապակցվածությունը, ապա սփյուռքահայ ընթերցումների համար մարտահրավեր էր հեղինակի քաղաքական հիմքով անձնական ու գեղարվեստական փորձառությունների միջև հարաբերությունը: Վեպի ընթերցումների այս հետնախորքին կյանքի կոչված ներկա հետազոտությունը չի շրջանցել և չէր կարող շրջանցել վեպի ընդունելության այս դրվածքը:¹⁹ Թե՛ խորհրդահայ, թե՛ սփյուռքահայ մտավորականությանը հուզած խնդիրների հանդեպ զգայուն լինելով, բայց ուշադրության կենտրոնում պահելով նաև վեպի ստեղծման հանգամանքներն ու համատեքստը՝ մեր հետազոտությունը քննության է առնում այն աշխարհը, որը վեպում պատկերված է որպես ամհետ կորած ու գեղարվեստական զրականության էջերում ապրել շարունակող մի փորձառություն:

Մահարու ինքնագրություններից մեկը լինելով՝ *Այրվող այգեստանները* սերտորեն կապված է հեղինակի վաղ մանկական փորձառությանը: Վեց տարեկանում որբացած մանկան կյանքում ազգային կուսակցություններն ու գործիչներն ընտանի իրողություններն ու մարդիկ էին: Նրանց միջավայրում էր հասակ առնում պատանին՝ միևնույն ժամանակ կայանալով որպես տոհմիկ ավանդույթներով հատկանշվող Վանի և նույն աշխարհը հեղափոխել փորձող քաղաքական կուսակցությունների հակասություններն իր մեջ խտացրած սուբյեկտ: Այս նկատի առնելով է ներկա ուսումնասիրության համար ելակետային նշանակություն ունեցել Մահարու փորձառության որբական կողմը: Մյուս կողմից՝ հեղինակն իր վեպի հերոսներին իրենց ժամանակի հասարակական, մշակութային ու քաղաքական կյանքի բովով անցած խառնվածքներ է համարում, նկատելով, որ նրանք «ոչ միայն քնարական, այլև արմենական, առևտրական, կուսակցական, ընտանեկան, հոգևորական, կրթական, ելևմտական, զինվորական, պաշտպանողական, միապետական, հանրապետական, մի խոսքով, երկսեռ հերոսներ [էին]»:²⁰ Ուստի, այս հետնախորքին

Tölölyan, «Terrorism in Modern Armenian Political Culture», ըստ՝ Leonard Weinberg (խմբ.), *Political Parties and Terrorist Groups* (Frank Cass, 1992), էջ 8-23:

¹⁹ Ներկա ուսումնասիրության խնդիրների շրջանակից դուրս է վեպի շուրջ ծավալված բանավեճերի մանրակրկիտ քննությունը: Հայաստանում վեպի շուրջ բանավեճերը թե՛ են նաև հետխորհրդային շրջանում: Հետխորհրդային առաջին տարիներին այն թե՛ ժամանակ է գրողի 90-ամյա հոբելյանի առիթով: 1993-ին Մահարու 90-ամյակին նվիրված ցերեկույթի ավարտին ՀԳՄ նախագահ Վահագն Դավթյանը նկատում է, որ. «ԳՄ քարտուղարության առաջին կինոստուդիան պաշտոնապես քննության կառնվի «Այրվող այգեստաններ» վեպին վերաբերող նախկինում ընդունված անարդարացի որոշումը, քանզի նա եղել է ճշմարտության ոտնահարում, ամոթալիորեն կամայական»: «Մահարու ներկայությունը», *Գրական թերթ*, 17 սեպտեմբերի 1993 թ.: Սրան հաջորդում են հանրային բանավեճեր: Տե՛ս, օրինակ՝ Լևոն Հախվերդյան, «Մահարու գրական դրաման», *Գրական թերթ*, 12 նոյեմբերի 1993 թ.: Ալմաստ Չաքարյան, «Մեր ասպետական, մեր հրաշագործ Գուրգեն Մահարի», *Հայաստանի հանարապետություն*, 31 հուլիսի 1993 թ.: Սեյրան Գրիգորյան, «Պատեհապաշտ մահարիպաշտություն», *Վարուժան*, մարտ-ապրիլ 1994 թ., նույնը՝ Սեյրան Գրիգորյան, *Բանասիրություն և բանավեճ* (Երևան: Չանգակ-97, 2002), էջ 71-85: Գրիգորյանի հրավերին արձագանքող պատասխանների համար տե՛ս Գառնիկ Անանյան, «Դարձյալ Այրվող այգեստանների մասին», *Վարուժան*, մայիս-հունիս 1994 թ., նույնը՝ Գառնիկ Անանյան, *Հրապարակախոսություն և քննադատություն* (Երևան: ԵՊՀ, 1996), էջ 319-340, ինչպես նաև Ռաֆայել Իշխանյան, «Ոտքը զգույշ դիր հողին», *Հայաստանի Հանրապետություն*, 8 հուլիսի 1994 թ.: Ռաֆայել Իշխանյան, «Հանդուրժողականություն, թե՛ ամբողջատիրություն», *Հայաստանի հանրապետություն*, 16 օգոստոսի 1994 թ.: Սա ոչ ամբողջական ցանկն է հետխորհրդային առաջին տարիներին մեծ կրթով բորբոքված բանավեճերի:

²⁰ Գուրգեն Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 6 (Երևան: Անտարես, 2015), էջ 388-389: Ներկա հետազոտության մեջ օգտագործել ենք Մահարու վերջին տարիներին հրատարակված *Երկերի լիակատար*

ստեղծված գեղարվեստական գործը յուրօրինակ «ընտանեկան պատում» է հանդես գալիս, որտեղ գեղարվեստական աշխարհը, սնվելով հեղինակի վաղ մանկական հիշողության բեկորներից, բացում է ընտանեկան ողբերգության ծալքերը 20-րդ դարասկզբի Վանի հասարակական-քաղաքական և հասարակական-մշակութային կյանքի ներքին հակասությունների համատեքստում:²¹

Պատումն այս հետազոտության մեջ գործածվում է այս իմաստով՝ որպես փորձառողի իր ժամանակը փորձառելու ու վկայելու յուրօրինակ *ապրելաեղանակ*, որն իր վերևի մակարդակում հանդես է գալիս որպես *ընթրում ու դիրքորոշում*, այլ կերպ ասած՝ որպես բարձր ու քաղաքականության փոխկապակցված հարաբերություն: Բարձրի ու քաղաքականության հարաբերության այս եղանակը ուղենշում է Մահարին, երբ վեպը կառուցում է ոչ թե հին բարձրի ու նոր քաղաքականությունների պարզ հակադրություն, այլ միմյանց հակադրված երկու տարբեր ապրելաեղանակների ու դրանք շրջագծող պատկերացումների, այլ կերպ ասած՝ երկու աշխարհների բարդ փոխթափանցումներով ծավալվող գեղարվեստական պատմություն: Այս համատեքստում հետազոտության տեսական շրջանակի ձևավորման համար կարևոր են եղել վեպի տեսության, պատումի ու պատմության մեր վաղ ընթերցումները, դրանց թվում՝ Միխայիլ Բախտինի վեպի տեսությանը վերաբերող ուսումնասիրությունները, ինչպես նաև Պոլ Ռիկյորի և Մարկ Նշանյանի պատմության ու պատումին նվիրված գործերը:²² Մյուս կողմից՝ քանի որ ուսումնասիրությունն անուղակորեն շոշափում է նաև երևակայության ու քաղաքականության փոխհարաբերության հարցերը, հետազոտության տարբեր մակարդակներում անուղակիորեն աշխատում են նաև Բենեդիկտ Անդերսոնի և Ռեմոն Գոսի թեմային վերաբերող հիմնարար աշխատությունների մեր վաղ ընթերցումների թողած հետքերը:²³

Այսքանով հանդերձ, ներկա ուսումնասիրությունը մի զգալի չափով ընդառաջում է Վարդան Ազատյանի «Ծնողագուրկ ծննդից հետո. «Որբաքաղաքը» խղճահարությունից անդին» գրությանը: Նորա Ն. Ներսեսյանի հայ որբերի կյանքին նվիրված ընդարձակ ուսումնասիրությունը բացող այս փոքրիկ գրության մեջ հեղինակը, քննարկելով 20-րդ դարի հայության ծանրագույն փորձառությունը և դրանում արվեստի ու գրականության խաղացած դերակատարությունը, առաջ է քաշում մի թեզ՝ ծնողագրկության փորձառությունը ստորագծող գրականությունը որպես որբական հենքով գրականություն՝

ժողովածուի վեցերորդ հատորը, որտեղ տրված է վեպը մեզ հասած բնագրային տարբերություններով: Վեպի համեմատական բնագրի մասին տես կազմողի՝ Գրիգոր Աճեմյանի տեղեկությունները, Մահարի, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, էջ 687: Անհրաժեշտության դեպքում նշել ենք, թե որ տարբերակից է գալիս հղվող հատվածը: Այսուհետ վեպին հղումները կտրվեն տողամիջում՝ նշելով էջը:

²¹ Եվրոպական վեպի պատմության մեջ ընտանեկան պատումի քաղաքական կողմը նկատի առնող ընթերցման համար տես, օրինակ՝ Nancy Armstrong, *Desire and Domestic Fiction. A Political History of the Novel* (New York, Oxford: Oxford University Press, 1987):

²² Տե՛ս Михаил Бахтин, *Эпос и роман* (Санкт-Петербург: Азбука, 2000); Михаил Бахтин, *Проблемы поэтики Достоевского, Работы 1960—1970 гг., рус. Собрание сочинений*, հ. 6 (Москва: Русские словари, Языки славянской культуры, 2002); Поль Риккёр, *Время и рассказ*, Т. В. Славко (թրգմ.) (Москва-Санкт-Петербург: СЕУ, 2000), հ. 1, հ. 2; Поль Риккёр, *Память, история, забвение*, И. И. Блауберг, И. С. Вдовина и др. (թրգմ.) (Москва: Издательство гуманитарной литературы, 2004); նույնը՝ Paul Ricœur, *La mémoire, l'histoire, l'oubli* (Paris: Seuil, 2000); Paul Ricœur, *Temps et récit*, հ. 1 (Paris: Le Seuil, 1983), հ. 2 (Paris: Le Seuil, 1984); Մարկ Նշանյան, *Պատկեր, պատում, պատմություն*, հ. 1 (Երևան: Ակտուալ արվեստ. Հովհաննիսյան ինստիտուտ, 2015), հ. 2 (Երևան: Ակտուալ արվեստ. Հովհաննիսյան ինստիտուտ, 2016):

²³ Տե՛ս Benedict Anderson, *Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism* (London, New York: Verso, 2006); Raymond Geuss, *Politics and the Imagination* (Princeton University Press, 2010), ինչպես նաև՝ Raymond Geuss, *History and Illusion in Politics* (Cambridge University Press, 2001): Այս և վերևում նշված աշխատությունները կարևոր են եղել նաև այս հետազոտության առաջին հատվածի համար, որի համար տես Վ. Դիլյան, «Երկիր Նայիրին կենցաղի ու քաղաքականության միջև», *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*:

որբագրություն ուսումնասիրել:²⁴ Ազատյանն իր գրության ավարտին մի ծանոթագրությամբ նկատում է նաև, որ նման տեսական ընդհանրացմամբ հանդերձ «հայկական «որբագրությունը» չափազանց տարբեր դրսևորումներ ունի», որոնցում ծնողաբաղձությամբ վերակերտվող հայրենի աշխարհը կամ հայրենիքը տարբեր անկյուններից կարող է երևալ, կախված գրողի որբացման պայմաններից: Այս շարքում նա առանձնացնում է Գուրգեն Մահարու փորձառությունը՝ որպես «հայկական ներքաղաքական հակասություններով» պայմանավորված որբացման մի դրվագ:²⁵ Գրականության, անձնական փորձառության և քաղաքական կյանքի սերտ կապերն ու հակասություններն իրենց ծնունդ տված կենսապայմաններում քննարկող ներկա հետազոտությունը, որը միևնույն ժամանակ սերում է անձնական փորձառության ու գրականության կապը նկատի առնող մեր պատկերացումներից՝ արվեստաբանի հետ մի խոսակցություն է, որը Ազատյանի ստորագծած հայ «որբագրությունը» ծավալում է իր տարբերության մեջ՝ առանցքում շարունակելով ունենալ գրականության միջով բարձրի ու քաղաքականության փոխհարաբերության հարցը:²⁶

Վեպի ստեղծման հանգամանքները

Այրվող այգեստաններ վեպը Մահարին գրել է 1958-1964 թվականներին ստալինյան ճամբարներից վերադառնալուց կարճ ժամանակ անց, երբ զուգահեռաբար աշխատում էր աքսորական իր փորձառությունը ներկայացնող գեղարվեստական գործերի վրա:²⁷ Վեպը սակայն մտահղացվել և մասամբ իրագործվել է 1930-ական թվականներին, գրեթե նույն շրջանում, երբ հեղինակն աշխատում էր *Մանկություն և պատանեկություն* ինքնակենսագրական պատումի վրա: Պատումին զուգահեռ 1933 թվականին *Վերելք* ամսագրի հաջորդական երեք համարներում Մահարին լույս էր ընծայում նաև *Գուրգեն խանի տոհմը* խորագրով վեպից մի հատված՝ «Անհետացած ոստանը» վերնագրով, որն այդպես էլ ավարտին չի հասցնում այդ շրջանում:²⁸ Վեպի այս տարբերակը Մահարին ձոնել է եղբորը՝ Խորենին, որի հետ անցել էր կորստի ու որբացման ճանապարհներով: Ամսագրում տպագրված հատվածը 1960-ական թվականներին հեղինակը ներառում է *Այրվող այգեստաններ* վեպում՝ շարունակելով և ընդլայնելով տոհմային պատմության այն գիծը, որը որդեգրել էր նա 1930-ական թվականներին:

Ինչո՞ւ է Մահարին ինքնակենսագրական պատումին զուգահեռ 1930-ական թվականներին ձեռնմուխ լինում հայրենի աշխարհը պակերող լայնակտավ մեկ այլ գործի ստեղծմանը և

²⁴ Վարդան Ազատյանը, «Ծնողագուրկ ծննդից հետո. «Որբաքաղաքը» խղճահարությունից անդին», ըստ՝ Նորա Ն. Ներսեսյան, *Որբաքաղաքը. Նպաստամատույց աշխատողներ, կոմիսարներ և «Նոր Հայաստանը կառուցողներ»*. Ալեքսանդրապոլ / Լենինական. 1919-1931, Հասմիկ Հարությունյան (թրգմ.) (Երևան: Հովհաննիսյան ինստիտուտ, 2018) էջ 12-23:

²⁵ Ներսեսյան, *Որբաքաղաքը*, էջ 23:

²⁶ Որբության ու մտավորական գործունեության առանձին մի ուսումնասիրություն է նաև արվեստաբան Աննա Գալստյանի Ադո Ադոյանին նվիրված հետազոտությունը, որտեղ հեղինակը ցույց է տալիս ծնողագրված որբի ու սոցիալիստական գաղափարների միջև անմիջական կապը: Տե՛ս Աննա Գալստյան, «Ադո Ադոյանի որբական կոմունիզմը», *Հայկական արդիությունների ուսումնասիրման մախազիթ*, <https://bit.ly/3imsINS>, այց՝ 10 օգոստոսի 2022 թ.: Գրականության և անձնական փորձառության մեր ըմբռնումների համար տե՛ս մեր մի քանախոսությունը, Սիրանուշ Դվոյան, «Մտավորական փորձառություն և մտավորական պատմություն», *Բուն*, <https://bit.ly/3VTC0yo>, այց՝ 12 դեկտեմբերի 2022 թ.:

²⁷ Ըստ Մահարու եղբորը՝ Խորեն Աճեմյանին ուղղված նամակի, Գուրգեն Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 15 (2) (Երևան: Անտարես, 2022), էջ 30-31:

²⁸ Տե՛ս *Վերելք*, 1933, թիվ 2-3, էջ 92-106; թիվ 4, էջ 3-14; թիվ 5, էջ 3-9:

ինչո՞ւ է կիսատ թողնում այն, դժվար է կռահումներ անել:²⁹ Ինքնակենսագրական պատումի առաջին մասը, ինչպես և գործից տպագրված հատվածը պատկերում էին հեղինակի վաղ մանկության աշխարհը՝ Վանը: Բայց ի տարբերություն ինքնակենսագրական գործի, որտեղ հեղինակը պատումն առաջ է տանում իր անունից՝ որպես իր հետ պատահած դեպքերի հաջորդական մի պատմություն, վեպում նա փորձում է ընդլայնել անվանապես միայն իրեն՝ Գուրգենին կապված տոհմային պատմության հետագիծը, բայց Վանի հայտնի մի վճառականի՝ Օհանես Մուրդախանյանի գեղարվեստական պատումի միջոցով:

Անագրում հրատարակված հատվածը մի դրվագ էր Վանի առօրյա կյանքից, որտեղ գլխավոր հերոսը երևում է իր ընտանեկան կյանքի ներսում: Հրատարակված պատառիկը հուշում է, որ Մահարին մտադրված է եղել ընտանեկան վեպ գրել՝ նրա սյուժեն անվանապես իրեն կապված պահելով: Տպագրված հատվածն ավարտվում է խորհրդավոր մի դրվագով՝ դաշնակցական գործիչ Արամի ու նրա ընկերների Օհանեսի եղբոր՝ Մխիթարի տուն գիշերային այցով: 1960-ականներին Մահարին վերադառնում է 1930-ական թվականների տպագրված հատվածին, մասամբ ընդլայնելով այն՝ ներառում վեպի առաջին մասում՝ դուրս թողնելով նաև պատումն անվանապես իրեն կապելու նախնական հղացումը: Վեպի այս տարբերակում Գուրգենն ինքը չէր վերակերտվող աշխարհի կենտրոնում: Ստեղծագործական առումով հեռացնելով պատումի հետ ունեցած իր անմիջական կապը՝ Մահարին ընդլայնում է 1930-ական թվականներին գրած գործի՝ *Գուրգեն խանի տոհմը* վեպի շրջագիծը և ծավալում այն որպես Մուրադխանյան տոհմի չորս զավակների՝ Համբարձումի, Օհանեսի, Գևորգի ու Մխիթարի առանձին պատումներ՝ տոհմային հիմնական գծի մեջ ներառելով նաև բազմաթիվ այլ վանեցիների՝ անպաշտոն լրատու Հակոբ Կանդոյանի, Երամյան դպրոցի տնօրեն Կույր Համբարձում Երամյանի, Փանոս և Սիմոն էֆենդիների, Օհանեսի մոր՝ Սրբուհու և կնոջ՝ Սաթենիկի, ամեն բան իր տեղին և ժամանակին անող և իմացող տիկին Կալիփսեի, դարբին Արաբոյի և մյուս վանեցիների ճյուղավորվող պատումները: Իրենց տարամիտումներով հանդերձ այս փոքրիկ պատումները միավորվում են ավանդական կացութաձևերով հատկանշվող տոհմիկ աշխարհի ամբողջականությունը ներկայացնող ընդարձակ սյուժե մեջ: Վեպի այս տարբերակում առանձին ծավալվում է նաև վաղ տարբերակում երևակված քաղաքական գործիչների՝ Վանում ծավալած հեղափոխական գործունեության պատմությունը՝ որպես առանձին սյուժետային գիծ: Իր հերթին հեղինակն ինքն էլ իր ծայնով տեղ է գտնում վեպում՝ հանդես գալով որպես դեպքերը վերհիշելով պատմող ու հայրենի աշխարհի կորուստը ներսից սգացող ականատես-վկա:³⁰

Մահարու հղացքի այսպիսի շրջափոխման մասին փաստական տեղեկություններ գրեթե չունենք: Եղբորը՝ Խորենին ուղղված մի նամակ սակայն ինչ որ առումով լույս է սփռում այս շրջադարձի ներքին հանգամանքների վրա: Պատասխանելով եղբոր՝ վեպին ուղղված քննադատությանը՝ Մահարին նամակում եղբորը բացատրում է երկի վաղ մտահղացման ու հետագա իրականացման հանգամանքների միջև տարբերությունները: Վեպի լույս տեսնելուց անմիջապես հետո, 1967 թվականի առաջին կեսին, առաջիններից մեկը լինելով՝ Խորենը քննադատում էր *Այրվող այգեստաններն* այն բանի համար, որ նա շարունակում էր 1920-ական թվականներին տարածված գրական մտայնությունները:

²⁹ Առանձին և խորը ուսումնասիրության է կարոտ 1930-ական թվականներին լայն ծավալում գտած ինքնակենսագրական գործերի ուսումնասիրությունը՝ հատկապես խորհրդային քաղաքականություններում ստալինյան շրջադարձի համատեքստում:

³⁰ (9) *Այրվող այգեստանները* որպես սուգ է դիտարկում նաև Մարկ Նշանյանը, տե՛ս Nichanian, *Writers of Disaster*, հ. 1, էջ 165-168:

Մահարին հատկապես քննադատվում էր Եղիշե Չարենցի *Երկիր Նայիրի* վեպի հանդեպ ունեցած դրական վերաբերմունքի համար, որը, ըստ Խորենի, ազգային հարցի վերաբերյալ «նիհիլիստական» գործ լինելով՝ 1920-ական թվականների հասարակական-քաղաքական մտայնություններից ծնունդ առած երկ էր:³¹ Սրանից ելնելով ու միևնույն ժամանակ *Այրվող այգեստանների* բնույթը նկատի ունենալով՝ նա հորդորում էր եղբորը վերանայել 1920-ական թվականների «խոտելի մտայնություններն» ու զնալ «նոր հոսանքի հետ»:³² Նոր հոսանք ասելով Խորենը նկատի ուներ 1960-ականներին գրականության մեջ ձևավորված 20-րդ դարասկզբի ազգային ողբերգությանը նվիրված այն պատումները, որոնք, ըստ նրա, անարգել կերպով որոտացնում էին հայրենիք բառը և կառուցում դարասկզբի ազգային պայքարի հերոսական մաքառման պատմությունը, մի բան, որը դարձյալ ըստ նրա, արգելված էր 1920-ական թվականներին:³³

Իրեն բնորոշ իրոնիայով, բայց միևնույն ժամանակ անսքող ցավով Մահարին պատասխանում է եղբորը նույն թվականի մարտի 5-ին գրած նամակով: Մեջբերում ենք նամակից վեպի գրության հանգամանքներին վերաբերող հատվածն ամբողջությամբ.

Ստացա կոնդախտավոր (խանձարուրված) կոնդակդ: Ասում եմ խանձարուրված, որովհետև եթե անդրադառնայիր, որ իմ վեպը հիմնականում գրված է 1958-1965 ժամանակահատվածում և գրված է իմ եռագրությունից, հատկապես «Մանկություն»ից և «Պատանեկություն»ից հետո, այսինքն՝ *այդ* փորձառության հիման վրա և այդ զգացողությամբ ու ընկալմամբ, գումարած իմ կյանքի 17 տարիների ապրումներն ու ընդհանրապես վերջին տարիների առաջընթացն արձակի ասպարեզում... ապա քո վախերն ու կասկածները ավելորդ կլինեին և անհիմն: Իմ վեպը ո՛չ «Երկիր Նայիրի» է, ո՛չ «Մուսա լեռ»: Չեմ ժխտում, որպես գրական գործ նա կկանգնի միայն և միայն «Երկիր Նայիրու» և Ակսել Բակունցի «Կյորեսի» կողքին, բայց ահա միայն և միայն գրական մշակույթի, արձակի, նորագույն մեր արձակի զարգացման աստիճանի առումով և ոչ թե ոգու կամ հոգու... Ես վաղուց դուրս եմ եկել Հիսուսին ծաղրելու տարիքից. գալով Վանին... ավելորդ չէ՞ անհանգստանալ, որ ես կարող եմ Վանի, նրա ողբերգության հանդեպ «ծաղրական տոն» բռնել... Իհարկե, իմ վեպում չեն պակասում և Հակոբ Կանդոյաններ և փամփլոներ, որոնց նկարագրելու համար ես չեմ խնայել ոչ հումոր, ոչ սարկազմ. իմ Օհանես աղա, Սիմոն աղա և Փանոս աղա եռյակը նկարված և գրված է նույն, հիշված շաղախով, բայց գործն ընդհանրապես այնքան է ողբերգական, որ ես մտածեցի *անգամ* գիրքը կոչել «Մատյան ողբերգության»: Բայց չարի: Չարի, որովհետև գտա, որ կարիք չկա խնձորի վրա գրել «խնձոր» և առհասարակ... հատկապես վերջին գլուխները գրելիս ես ապրեցի հոգեկան մեծ

³¹ Խորեն Աճեմյանի 1967 թվականի փետրվարի վերջերին գրած նամակը պահվում է ԳԱԹ, Գուրգեն Մահարու ֆոնդ, թիվ 142-ում: Խորեն Աճեմյանի նամակները, որտեղ նա շարունակում է եղբորն ուղղված քննադատությունները տես նաև Գուրգեն Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 15 (2), էջ 44-45, 47-48:

³² Խորենը *Այրվող այգեստանները* համարում էր ռեալիստական գործ. «Չարենցը իր վեպը գրեց զուտ սատիրիկ ժանրով: Քո գիրքը ռեալիստական է մի քանի սատիրիկ խախտումներով: Ուրեմն, ժանրի գծով դու շատ էլ լայն հնարավորություններ չունես մեղմելու քեզ ուղղված քննադատությունները»: ԳԱԹ, Մահարու ֆոնդ, թիվ 142, թ. 26: Դժվար է ասել, թե ինչ նկատի ունի նա վեպը ռեալիստական համարելով:

³³ Տես Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 15 (2), էջ 47-48: Նույն նամակը ամբողջությամբ տես ԳԱԹ, Գուրգեն Մահարու ֆոնդ, թիվ 142, ինչպես նաև համապատասխան ծանոթագրություններով *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, <https://bit.ly/3CrVYD6>, այց 10 օգոստոսի 2022 թ.: Փետրվարին գրած նամակում Խորենը անարգում է եղբորն այն բանի համար, որ նա պասկվիլի է վերածել արմենական գործիչ Բրուտյանի, դաշնակցական գործիչ Իշխանի կերպարները, այն դեպքում, երբ «ավատիական հրեան (նկատի ունի Ֆրանց Վերֆելին Դվոյան) կարող էր հիանալ և հիացնել Մուսաղաղի հերոսամարտով»: Տես ԳԱԹ, Գուրգեն Մահարու ֆոնդ, թիվ 142: Նույն նամակը հատվածաբար տես նաև Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 15 (2), էջ 361:

տագնապներ համեմված գիշերային աջլաջեր մղծավանջային երագներով՝ բոլորը կապված Վանի հետ: Եվ այդ բոլորից հետո «թեթև քնծիծաղ տո՞ն...»: Հանա՞ք ես անում, ճրատ... Դեռ Չարենցը մի անգամ խորին ցավով նշեց, որ ես իմ Վանը նկարագրել եմ սիրով ու ջերմությամբ, իսկ ինքը՝ Ղարսը՝ չարությամբ և կծու... Ի՞նչ պատահեց ինձ հետ, հասունացա ու փոխվեցի՞ (փոխ.– թուրքերեն՝ քա՞ք)... (ընդգծումները՝ հեղինակի):³⁴

Հատվածից երևում է, թե ինչպես է Մահարին, ընդունելով հանդերձ, որ իր գործը 1920-1930-ական թվականներին լույս տեսած Չարենցի և Բակունցի հայրենի աշխարհները պատկերող վեպերի շարքում է, միևնույն ժամանակ հեռու պահել երկը 1920-ական թվականների մեջ տեսնելու եղբոր նկրտումներից: Նա հստակեցնում է, որ թեև ծագումնաբանորեն վեպը կապված է և սերում է 1930-ական թվականների իր ինքնակենսագրական գործից, բայց այն 1960-ականներին միտումնաբերական ստացած երկ է և որպես այդպիսին էապես տարբեր է 1920-1930-ական թվականներին ծնունդ առած խորհրդահայ վիպագրության անդրանիկ երկերից:³⁵ Մահարու համար առնվազն տարօրինակ է թվում, որ եղբայրը չի նկատում իր և Չարենցի՝ հայրենի աշխարհը պատկերելիս գործածած գրական միևնույն «շաղախի»՝ հեզմանքի իր դեպքում՝ սիրով ու ջերմությամբ, Չարենցի դեպքում՝ կծու չարությամբ ներծծված լինելու նուրբ տարբերությունը: Մյուս կողմից՝ չանտեսելով, որ ինքնակենսագրական պատումը հիմնարար նշանակություն է խաղացել *Այրվող այգեստանների* ստեղծման գործում, Մահարին նկատում է, որ վեպն ու ինքնակենսագրական պատումը միջարկված են իր արտոնական փորձառությամբ ու գրական ասպարեզի նոր նվաճումներով:³⁶ Փաստորեն, Մահարին վեպը, ինչ-որ առումով իր առավել *հասուն գրական փորձառության* արդյունք համարելով, միևնույն ժամանակ տեղակայում է այն 1960-ական թվականների առաջին կեսի մեջ:

Եվ այսպես ի՞նչ հասարակական ու գրական ի՞նչ համատեքստում էր ծնունդ առնում *Այրվող այգեստաններ* վեպը և գրական ի՞նչ փորձառություն էր ընկած Մահարու երկի ստեղծման հիմքում, որոնք այդքան վճռորոշ կերպով գծում են Մահարու և Չարենցի ու Բակունցի վեպերի միջև սահմանը:³⁷

³⁴ Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 15 (2), էջ 30-31: Վեպը գրելու ստեղծագործական խնդիրների մասին Մահարին խոսում է մտավորական ընկերների ուղղված նամակներում, տես, օրինակ՝ Գուրգեն Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 15 (1) (Երևան: Անտարես, 2022), էջ 87-88, 109-110, 134, 155, 184-185, 195, 419:

³⁵ *Երկիր Նայիրի* վեպի ստեղծման հանգամանքների մասին տես մեր այս ուսումնասիրության առաջին մասը, Դվոյան, «Երկիր Նայիրին կենցաղի ու քաղաքականության միջև», էջ 14-27, *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, <https://bit.ly/3CqNd2Q>, այց՝ 10 դեկտեմբերի 2022 թ.: Անհերքելի է, որ Մահարին 1930-ական թվականներին հմայված է եղել *Երկիր Նայիրիով*: Չարենցի վեպը Մահարու գրական և անձնական փորձառության տեսանկյունից առնվազն կարող էր նրան անմատչաբար թվալ կորցրած հայրենի աշխարհը պատկերելու գեղարվեստական կառույցի առումով: Այս են վկայում այն մի քանի պատառիկները, որոնք Մահարին ինքն է պատմում Չարենցի մասին իր հուշերում: Տես Գուրգեն Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 9 (Երևան: Անտարես, 2016), էջ 198, ինչպես նաև Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 6, էջ 12:

³⁶ Առանձին ուսումնասիրության է կարոտ Մահարու *Այրվող այգեստաններ* վեպի և նրա սիբիրյան պատումի միջև կապը, այն, թե ինչպես են ճամբարային փորձն ու հորը կորցնելու վաղ ընտանեկան ողբերգությունը կապված միմյանց և թե ինչպես են դրանք օգնում մեկը մյուսին՝ վտանգված հիշողության գեղարվեստական լեզուն գտնելու ճանապարհին: Մահարու արտոնական գրականության մասին տես Սիրանուշ Դվոյան, «Վաչե Սարգսյանի վերադարձը», ըստ՝ Վաչե Սարգսյան, *Ավեղդամա. Անկրկնելի պատմություն* (Երևան: Հովհաննիսյան ինստիտուտ, 2019), էջ 430-432:

³⁷ Այս առումով ուշագրավ մի դրվագ կա Մահարու և սփյուռքահայ մտավորական Գրիգոր Շահինյանի նամակագրության մեջ: Շահինյանը Մահարու գրականության արժևորողներից մեկն է Սփյուռքում (տես Գրիգոր Շահինյան, *Գուրգեն Մահարի վաթսուների հանգրուանին* (Բեյրութ: Մշակ, 1964)) ու միևնույն ժամանակ *Այրվող այգեստաններ* վեպի առաջին գնահատողներից մեկը: 1968 թվականի հունվարի 31-ին գրողին ուղղված մի նամակում սփյուռքահայ մտավորականն ակնարկում է, որ հավանաբար Չարենցի *Երկիր Նայիրին*

Վեպի ստեղծման համատեքստը

Այրվող այգեստաններ վեպի բուն գրությունը ժամանակագրորեն համընկնում է հետստալինյան առաջին ձնհալի շրջանի հետ: Սա Խորհրդային Միության այն շրջանն էր, երբ ԽՄԿԿ ԿԿ առաջին քարտուղար Նիկիտա Խրուշչովը, 1956 թվականի փետրվարի 25-ի Սովետական Միության Կոմունիստական Կուսակցության XX համագումարի իր հաշվետու զեկուցմամբ սուր քննադատության ենթարկելով ժողովրդից ու հանրային կյանքից կտրված ստալինյան քաղաքականությունները, տեղ էր բացել խորհրդային քաղաքականությունների իրենց իսկ ներսում վերադիրքավորվելու համար:³⁸ Հիմնական խնդիրը, որ սահմանում էին խրուշչովյան քաղաքականություններն այն էր, որ մնալով կոմունիստական հասարակարգ կառուցելու խորհրդային քաղաքականությունների ծիրում՝ հարկ էր հաղթահարել իրական կյանքի ու գաղափարական գործունեության միջև առաջ եկած խորը բևեռացումը:

Քաղաքական կյանքի այսպիսի վերադիրքավորման պայմաններում փոխվում էր նաև գրականության օրակարգը: Ընդունելով խորհրդային հասարակության առջև ծառայած նոր մարտահրավերները՝ գրականությունն իր հերթին գրական ու հանրային կյանքում վերադիրքավորվում էր ըստ նախընթաց շրջանի փորձի, ինչն իր հետ բերում էր լրջագույն խնդիրներ, քանի որ նման վերադիրքավորումը նշանակում էր մի կողմից՝ վերադիրքավորում նախընթաց շրջանում ձևավորված գրական ըմբռումների հանդեպ, մյուս կողմից՝ նրանց համատեքստում: Գրական կյանքի այսպիսի «երկատվածությունը» երևում է նաև Նիկիտա Խրուշչովի 1959 թվականի մայիսի 22-ին կայացած Գրողների երրորդ համագումարում գրողներին տրված «հանձնարարության» մեջ: Նկատելով, որ կոմունիստական պայքարն այդ փուլում ծրագրից վեր է ածվել կյանքի, Խրուշչովը կոչ է անում խորհրդային գրողներին առավել զգայուն լինել այս իրադրության հանդեպ և սա նկատի առնելով «մխրճվել կյանքի մեջ, ուսումնասիրել այն զեղարվեստական կերպարներում ու մարմնավորել սովետական երկրի կյանքում եղած բոլոր նորը, ավելի խորը ցույց տալ մարդուն՝ մեր հասարակարգի բոլոր նյութական ու հոգևոր արժեքները ստեղծողին»:³⁹ Խրուշչովը, փաստորեն, մի կողմից՝ կոչ էր անում շարունակել 1930-ական թվականներին ձևավորված սոցիալիստական ռեալիզմի ավանդույթը, մյուս կողմից՝ դա անելիս առավել խորամուխ լինել խորհրդային մարդու աշխարհը:

Երկակի այս վիճակը իր հետքն է թողնում գրական ըմբռումների ձևավորման վրա: Խորհրդային մարդուն իր օրինակով ոգեշնչող և խորհրդային շինարարությանը լծված նոր տիպ ստեղծելու գեղարվեստական որոնումները խորհրդահայ գրականության մի թևում

«դրդիչ դեր է խաղացել» Բակունցի *Կյորեսի* և Մահարու *Այգեստանների* համար՝ դիտարկումը եզրափակելով այսպես. «Հավանական է նաև որ իրարու հետ խորհրդակցած ըլլաք՝ գրելու սկսել է առաջ»: «Գրողի եւ գրականագետի նամակագրութիւնը», *Քաղմավէպ*, 2005, թիվ 1-4, էջ 22: Ի պատասխան Մահարին գրում է. «Քո դիտողութիւնը «Երկիր Նայիրի», «Կեորես», «Այրուող այգեստաններ» գործերու մասին ճիշտ է, միայն թէ այս գործին մէջ չի եղել քո նշած «իրար հետ խորհրդակցած» լինելու պարագան, իսկ եթէ եղել է *խորհրդակցութիւն* ապա այդ՝ եղել է լուռ ու տարերայնօրէն» (ընդգծումը՝ Մահարու): «Գրողի եւ գրականագետի նամակագրութիւնը», *Քաղմավէպ*, էջ 24-25: Շահինյանը հետագայում համեմատական մի քննությամբ փորձում է ուրվագծել այս երեք գործերի միջև ընդհանրություններն ու տարբերությունները, տե՛ս Շահինեան, ««Երկիր Նայիրի», «Կեորես», «Այրուող այգեստաններ»», *Սիեկան*, 1968, թիվ 2, էջ 21-28: Շահինյանի այս հոդվածից մի հատված տե՛ս նաև *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, <https://bit.ly/3VSfaXZ>, այց՝ 10 դեկտեմբերի 2022 թ.:

³⁸ Տե՛ս Доклад Первого секретаря ЦК КПСС тов. Хрущева Н.С. XX съезду Коммунистической партии Советского Союза 25 февраля 1956 года, առցանց՝ <https://bit.ly/3Zi5jgZ>, այց՝ 12 դեկտեմբերի 2022 թ.: Չեկուցման նախապատմությունը և այլ մանրամասներ կարելի է գտնել այստեղ՝ <https://bit.ly/3VSflx1>, այց՝ 12 դեկտեմբերի 2022 թ.:

³⁹ «Ժողովրդին ծառայելը սովետական գրողների բարձր կոչումն է. ընկեր Ն. Ս. Խրուշչովի ճառը գրողների երրորդ համագումարում. 1959 թվականի մայիսի 22-ին», *Սովետական գրականություն*, 1959, թիվ 6, էջ 20:

ուշագրավ կերպով կապվում հեղափոխության առաջին տարիներին խորհրդահայ իշխանությանը մտահոգած հայ որբերի, մյուս կողմից՝ հայոց կյանքում անջնջելի հետք թողած ցեղասպանության գեղարվեստական վերապատկերման հարցերին: Վերջիններս բեկվելով հայ որբերի ու գաղթականության ցեղասպանությունը վերապրելու արդեն խորհրդային փորձառության անկյան տակ՝ ի հայտ էր բերում հարցի գեղարվեստական նոր ըմբռնումներ: Այս առումով ուշագրավ են հատկապես 1950-ական թվականների երկրորդ կեսին լույս տեսած երկու ստեղծագործություններ, որոնք ինչ-որ առումով ուղենշում են թեմայի հետագա ծավալումները խորհրդահայ գրականության մեջ: Խոսքը Խաչիկ Դաշտենցի *Խողեղան* (1956) վեպի և Պարույր Սևակի *Անլռելի զանգակատուն* (1958) կոթողային պոեմի մասին է:

Խողեղանում ցեղասպանությունից մազապուրծ որբ հեղինակը պատկերում էր շինական այն ժողովրդին, որը օտար բռնապետություններից իր հայրենիքն ազատագրված տեսնելու հույսը սրտում անթեղած՝ Խորհրդային Հայաստանի շինարարությանը լծվելով էր տեսել իր երազանքի իրականացումը՝ դառնալով «Սովետական Հայաստանի համայնական դաշտերի առաջին շինարարները գյուղում»:⁴⁰ *Անլռելի զանգակատուն* պոեմում դարձյալ որբ հերոսը՝ Կոմիտասը, Սևակի պատկերացմամբ իր ժողովրդի կյանքը մշակութայնորեն շրջելով՝ «հայ երգային համակարգն ու երաժշտական «քերականությունը» «տարբերելու և վերահամադրելու» ճանապարհով և երգի մեջ հայ ժողովրդին վերստեղծելով էր խիզախել հարթել հայ ժողովրդի դարավոր մաքառման ուղին:⁴¹ Եվ որքան էլ երկու հեղինակներն իրենց գործերով ցեղասպանությանը զոհ զնացած հայության անթաղ մնացած հատվածի հիշատակն էին ոգեկոչում, անհնարին է չնկատել, որ նրանք հայ որբի ու գաղթականության վերապրելու երկու տարբեր ուղիներ են նշում խորհրդահայ համատեքստում:⁴²

Դաշտենցի հայացքը, հեղինակի իսկ բնորոշմամբ «հառած է ահա հասարակ, բայց մեծ մարդկանց վրա», որոնք լծված լինելով խորհրդային շինարարությանը, մինևույն ժամանակ կապված էին իրենց ընտանիքներից սերող ավանդույթներին հենց այս անկյան տակ: «Ազնիվ և առաքինի էին այդ մարդիկ: Նրանք ծնված էին գյուղական անշուք խրճիթների մեջ, ունեին երկրագործի կոշտացած ձեռքեր, ստեղծագործ բազուկ»:⁴³ Սևակի հայացքը հայ մշակութային կյանքի մեջ մեծ շրջադարձ իրականացրած մտավորականին է ուղղված, որն ըստ նրա ոչ թե մի հերթական մեծություն է հայ մշակույթի պատմության մեջ, այլ «մեծ գիտնական, մեկը այն երջանիկ ու դժբախտ հայտնագործողներից, որոնց հավաքական անունը Կոլումբոս է», իսկ այսօրինակ մեծությունն, ըստ Սևակի, «սկզբնավորող է, ոչ թե շարունակող» (ընդգծումը՝ Սևակի):⁴⁴ Երկու հեղինակների հայացքում թե՛ շինական-աշխատավոր, թե՛ մտավորական հայ որբը թեև իր կյանքի մեջ խիզախող, մեծ գործ անող և այս իմաստով միայն՝ հերոս է, բայց արմատապես տարամիտում են իրենց կենսաձևերով ու դրանք շրջագծող աշխարհընկալումներով:

⁴⁰ Տե՛ս Խաչիկ Դաշտենց, *Խողեղան* (Երևան: Հայպետհրատ, 1956), էջ 7: Համայնական դաշտերի սերմնացանների թեման 1930-ական թվականների հիմնական թեմաներից մեկն էր: Դաշտենցի գործը տարբեր առումներով հղում է Չարենցի *Գիրք ճանապարհիին* ու Բակունցի *Սև ցելերի սերմնացաններին*:

⁴¹ Պարույր Սևակ, «Դիմանկարի փոխարեն», *Գրական թերթ*, 21 նոյեմբերի 1969 թ.:

⁴² Դաշտենցը վեպի նախաբանում գրում է. «Սիրելի՛ հայր, ես քո դեմքը երազի պես եմ հիշում: Քառասուն տարի է անցել այն օրից, երբ դու ինձ շալակելով անցար Մեղրագետի ափերով, կամենալով փախցնել Արևելյան Հայաստան: Քո կյանքի ուղին ընդհատվեց Մուշ քաղաքում: Եվ այժմ, քառասուն տարի հետո, իմ աչքերից թափվում են այրող արցունքներ քո հեռավոր ու անհայտ գերեզմանի վրա, բոլոր նրանց շիրիմներին, որ հանգչում են քեզ հետ Մշո դաշտում...»: Դաշտենց, *Խողեղան*, էջ 8: Սևակի պոեմն ամբողջությամբ տողորված է ոգեկոչման ծեսով:

⁴³ Դաշտենց, *Խողեղան*, էջ 7-8:

⁴⁴ Սևակ, «Դիմանկարի փոխարեն»:

Դաշտենցն իր հերոսների կյանքի արժեքը տեսնում էր ռամիկ պապերի հիշողությունը գործով վառ պահելու և շարունակելու, իսկ Սևակն իր հերոսի արժանիքը տեսնում էր անհատական խիզախամամբ հայի ինքնուրույնությունը աշխարհին ցույց տալու մեջ: (ընդգծումը՝ Սևակի):⁴⁵

Հասարակական-քաղաքական այս պայմաններում ու գրական-մշակութային տարամիտող այս ըմբռնումների համատեքստում է միտուարյուն ստանում Մահարու 1930-ական թվականներին հղացված գործը, որը հեղինակի իսկ վկայությամբ սերում էր նաև նրա *Մանկություն և պատանեկություն* ինքնակենսագրական պատումի փորձից: Եթե այս ուղղությամբ նայենք, ապա ակնհայտ է, որ 1930-ական թվականներին Մահարու համար կենսական հարց էր որբությունը գրականությամբ վերապրելը, ինչի մասին խոսում է հեղինակը գործի նախաբանում:

Տարիները աղոտել են շատ բան, օ՛, այո, շատ գծեր ջնջվել և շատ պայծառ դեմքեր մշուշվել: Ես ուզում եմ փրկել մնացածն ու հնարավորը իմ մանկության խորասուզվող ոսկե մակույկից:

... Ինձ մնում է փրկել մնացածն ու հնարավորը: Հիշել եմ ուզում, վերհիշել և գրել, գրել հեշտ և թեթև, գրել և զգալ, որ քունքերս խփում են ներքին հուզմունքից, գրել անմշուշ, պայծա՛ռ, պայծա՛ռ իմ մանկության ընկեր, վաղամեռ Մայիսի նման, այն քաղաքի երկնքի նման, ծովի կապույտի նման, այգեստանների կանաչի ու լուսնկա գիշերների խորության նման:

Գրել:⁴⁶

Մահարու այս խոստովանությունն ուշագրավ է նրանով, որ երիտասարդ գրողն առաջին անգամ շոշափում է ինչպես աշխարհից, այնպես էլ իր հիշողություններից ջնջվող հայրենի աշխարհը գրականությամբ փրկելու հարցը: Այն իրենց պատկերով՝ պարզությամբ ու խորությամբ, նման պիտի լինի իր վաղամեռ ընկերոջն ու հայրենի բնությանը, բայց միևնույն ժամանակ վերակերտված պատկերը պիտի հուզի գրողին իր անմիջականությամբ, օգնի վերապրել հայրենի տան կարոտն ու զգալ իրեն նույն աշխարհում: Մահարու խոստովանությունն ուշագրավ է նաև նրանով, որ ի հայտ է բերում որբական փորձառության տիպական երեսը: Ապրելու կոնկրետ պայմանների ու հայրենի աշխարհից հիշողության մեջ մնացած բեկորների միջև կապն այնքան խախտու է որբի համար, որ խորտակվող կյանքի ու անհետ կորստյան տագնապներ ծնելով՝ մանկական զվարթախոհությունը նրա մեջ վերագտնելու հույսով մղում է պատանուն երևակայության ուժով վերակերտել մանկության աշխարհը:

Սա մի պատրանք էր, որի նյութականությունը հակառակ ծայրից ավելի վաղ շոշափել էր պատանի Գուրգենը որբանոցային առաջին տարիներին: 1963 թվականին գրած «Ինքնակենսագրության» մեջ Մահարին հիշում է, թե ինչպես Դիլիջանի որբանոցում մի գիշեր բոլորի աչքից հեռու սերտարանում հայրենիքին նվիրված առաջին բանաստեղծությունը գրելիս հանկարծ զգացել էր, որ մեծանում է. «Երբ բացվեց առավոտը, ես նայեցի իմ ընկերների վրա, և ինձ թվաց, որ ես, եթե ոչ երկու, զոնե մի գլխով բարձր եմ իմ ընկերներից»:⁴⁷ Մահարու այս խոստովանության մեջ որբի մեծանալու ներքին բարդություններն են ի հայտ գալիս, թե ինչպես աճելու «բնական» պայմաններից՝

⁴⁵ Դաշտենց, *Խողեղան*, էջ 8: Սևակ, «Դիմանկարի փոխարեն»:

⁴⁶ Գուրգեն Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4 (Երևան: Անտարես, 2015), էջ 7:

⁴⁷ Գուրգեն Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 1 (Երևան: Անտարես, 2013), էջ 11:

տմից ու ծնողներից գրկված մանուկն ինքն առավել «մեծ տան»՝ հայրենիքի պատկերը կերտելով աճում էր դրա մեջ:

Երբ կողք կողքի են գալիս գրելով մանկական զվարթախոհությունը վերագտնելու և հայրենիքի հորինված պատկերից ուժ առնելով մեծանալու զույգ պատկերները, ակնհայտ է դառնում, որ տնագրկված Մահարու գոյությունն ինքը, հետևանքը լինելով կորսված «փոքր աշխարհի», միևնույն ժամանակ այդ հենքի վրա էր ծնունդ տալիս հայրենիքի ցնորային «մեծ» պատկերին:⁴⁸ Ընտանիքի ներսում «բնականորեն» աճելու ու մեծանալու հնարավորությունը կորցրած պատանու՝ երևակայության ուժով առավել «մեծ տան»՝ հորինած պատկերից ուժ առնելով մեծանալու այս դրությունն էր ընկած Մահարու 1930-ական թվականներին հայրենի աշխարհը գեղարվեստորեն պատկերելու հիմքում: Ի դեպ, այս է պատճառը, որ 1930-ական թվականների ինքնակենսագրական պատումները այս կամ կերպ կապված են իրեն՝ Գուրգենին:

Վերը ներկայացրած մամակում մինչդեռ հեղինակը խոսում է այն մասին, որ հեռացել է 1930-ական թվականների իր պատկերացումներից: Ավելին, 1964-ին գրած ու մեծ ընդունելության արժանացած իր մի գործում՝ «Բալլադ կատվի մասին» բանաստեղծության մեջ, հեղինակը խոսում է արդեն հայրենի տան ավերակների հիշողություններում փակվելու վտանգի մասին՝ ըստ էության շոշափելով իր վաղ որդեգրած մոտեցման խնդրահարույց կողմերը: Բալլադի հերոսը՝ հազարումի թելերով իր աշխարհին կապված խառնվածքով բանաստեղծ «տան պահապան» կատուն երբ աշխարհում գաղթ էր ու փախուստ, հրաժարվում է «թողնել հայրենի տունն» ու «սովոր վայրերը»: Հայրենի աշխարհում գործված «ոճիրների լուռ վկան» ու «միակ ականատեսը» լինելով՝ նա դատապարտված էր, սակայն կորչելու անհուշ-անհիշատակ, նույնիսկ եթե հասցրել էր գրի առնել իր տեսածը.

Կամ գուցե նա պահել է ավերակում մեր հին տան
Իր ճանկերով գրոտած դանթեական մի մատյան...

Բայց ասում են, որ չկա, չի թողել նա ոչ մի թուղթ,
Ու մեռել է մի գիշեր ահավորած իմ կատուն...

Այնտեղ մահն է սավառնում աշխարհն առած թևերին,
Չերգեց, մեռավ իմ կատուն... լսող չկար երևի...⁴⁹

Փոխաբերաբար պատկերված իր դրությունն է ներկայացնում բալլադը, որի մասին Մահարին ուղղակիորեն խոսում է նաև *Այրվող այգեստաններ* վեպի նախաբանում, երբ գրում է.

Մինչ այդ, գույնզգույն ապակիների միջով ես ցույց էի տվել Վանը՝
«Մանկություն և պատանեկություն» գրքում: Այդ ինձ չբավարարեց: Ես ուզեցի
կոտրել բոլոր ապակիները և ընթերցողին դարձնել «վանեցի», ուր էլ որ նա ծնված

⁴⁸ Հայ որբերի տան ու հայրենիքի ցնորքի մասին տես նաև՝ Վարդան Ազատյան, ««Ծնողագուրկ ծննդից հետո»․ Որբություն, քաղաքականություն, արվեստ» բանախոսությունը, <https://bit.ly/3WPZMNI>, այց՝ 10 դեկտեմբերի 2022 թ.:

⁴⁹ Գուրգեն Մահարի, «Բալլադ կատվի մասին», *Սովետական գրականություն*, 1964, թիվ 1, էջ 57: Տես նաև Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 1, էջ 557-558, ինչպես նաև՝ *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, <https://bit.ly/3Zi65uq>, այց՝ 10 օգոստոսի 2022 թ.:

լինել, այնպես, որ նա ոչ միայն տեսներ Վանը, այլև զգար, այնպես, ինչպես ես եմ զգում Կարսն ու Գորիսը» (ընդգծումները՝ Մահարու): (22)

Հասակ առած որբը, փաստորեն, խորապես հասու էր նրան, որ փոփոխված կյանքի պայմանների մեջ փոխվել էր նաև հայրենի աշխարհին նայելու իր դիտակետը: 1959 թվականին գրված մեկ այլ՝ «Տարեմուտի լույսերի տակ» բանաստեղծության մեջ նա նկատում է, որ նախկին որբերը դարձել են խորհրդային Հայաստանի հենասյունները.

Նրանց դուք ճանաչում եք:
Ահա նրանք:
Նախկին որբ, այժմ՝ մինիստր
Անդրանիկ Շահինյանն ու իր
Տեղակալ Սամսոն Գասպարյանը,
Նախկին անապաստան, արդ՝
Գիտնական, ֆիզիոլոգ Էզրաս
Հասրաթյանը, նախկին որբ, այժմ՝
Խմբագիր՝ (տես «Լեմինյան ուղի»)
Ադո Ադոյանը, նախկին որբ,
Այժմ՝ առևտրի մինիստրի տեղակալ
Արտաշես Պետրոսյանը, նախկին
Որբուհի, այժմ՝ գիտնական Ազնիվ
Պետրոսյանը, նախկին որբեր,
Այժմ՝ նորին դպրություն Նայիրի
Զարյանն ու Վաղարշակ Նորենցը:
Շարունակե՞՞ք:⁵⁰

Մահարին ինքը թեև իր թվարկած «նախկին» որբերի շարքում չէ, բայց խորհրդային երկրի շինարարության բարդությունների միջով, այդ թվում նաև՝ ստալինյան ճամբարներով անցած գրողը 1960-ական թվականներին առերեսվում էր իսկ իսկ փորձառությանը՝ որպես նախկին որբ ու խորհրդային երկրի քաղաքացի: Պատահական չէ, ուստի, որ հենց այս համատեքստում նա փոխեր հայրենի աշխարհը վերապատկերելու իր դիտակետը՝ վիպային սյուժեի կենտրոն բերելով հայրենի աշխարհը և 20-րդ դարասկզբին նրանում տեղի ունեցած վճռորոշ իրադարձությունները: «Նախկին» որբն իր հայրենի աշխարհը գեղարվեստորեն վերակերտելով և 20-րդ դարասկզբի հայության կյանքը պատուհասած դեպքերը վերապատկերելով էր միանում որբ ընկերների բանակին՝ միևնույն ժամանակ իր այսպիսի փորձով ի հայտ բերելով խորհրդային նոր քաղաքականությունների համատեքստում օրախնդիր դարձած վտանգաշատ վերադիրքավորման հարուցած բարդությունները գրական-հասարակական դաշտում:

Որբության հետնաշխարհը

Քաղաքական կուսակցությունների և ընտանեկան աշխարհի միջև վեպում ծավալվող հարաբերությունների հիմքում Մահարու ընտանեկան պատմությունն է: Վեցամյա մանուկը որբացել էր քեռու՝ դաշնակցական գործիչ Տիգրան Միրախորյանի պատահմամբ կամ կուսակցական-զաղափարական նպատակներով արձակված գնդակից, որի զոհը

⁵⁰ Ըստ՝ Հայկական արդիությունների ուսումնասիրման ծրագիր, <https://bit.ly/3lvEb8y/>, այց՝ 12 դեկտեմբերի 2022 թ.:

Մահարու հայրն էր՝ Վանում հայտնի մտավորական, մեծ հեղինակություն վայելող ուսուցիչ, արմենական գործիչ Գրիգոր Աճենյանը: Գրիգորը շառավիղն էր Պարսկաստանից Վան գաղթած Աճեն-Մուրադխանյան գերդաստանի, որոնք Վանում հայտնի վաճառականներ էին, իսկ նրանց վերջին սերունդները՝ Գրիգոր և Մկրտիչ Աճենյանները, մտավորականներ: Դոր սպանության չբացահայտված հանգամանքներն ուղղակի կամ անուղղակի կերպով ուղեկցում են Մահարուն ողջ կյանքի ընթացքում:⁵¹ Մանկան հարցասիրությանը տատի տված պատասխանը, թե զնդակն արծակվել էր հոր ձեռքից, իսկ տարիներ անց քեռու բացատրությունը, թե չար պատահականության արդյունք էր, չեն փարատում Վանում բերնեբերան պտտվող պատմություններից ծնունդ առնող կասկածները, թե Գրիգոր Աճենյանի սպանությունը քաղաքական դրդապատճառներ ուներ:⁵² Քաղաքական կուսակցությունների գործունեությունը, փաստորեն, որպես վրահաս ողբերգություն ընտանեկան կյանքով անցնելով էր կապվել մանուկ Գուրգենին: Իր վաղ մանկության տարիներն այսպես է հիշում Մահարին *Մանկություն և պատանեկություն* գործում.

Թե ինչո՞ւ իմ մանկական տարիների մեծ մասը ես ոչ թե մորս, այլ տատիս մոտ անցկացրի, այս մասին գրելը շատ երկար կլիներ: Կասեմ միայն, որ շաբաթվա մեջ հազիվ մի երկու օր հյուր զնայի մեր տուն. մնացած ժամանակը ես ապրում էի տատիս մոտ: Մայրս ինձ համար Անուշ էր, տատս՝ մայրիկ, նրանց տունը՝ «մայրիկանց տուն»: Քեռիս տարվա մեջ միայն ծմռան ամիսներին էր լինում տանը, մնացած ժամանակ նա գյուղ էր գնում և մի կողմից տնտեսությամբ էր զբաղվում, իսկ մյուս կողմից, ինչպես տատս էր ասում, «դաշնակ կոմիտե» էր...⁵³

Մահարու այս հուշն ուշագրավ կերպով իր մեջ ծրարում է այն յուրահատուկ դրությունը, որի մեջ հասակ էր առնում որբացած պատանին: Մանկան խնամքն իրենց վրա էին վերցրել Յուզաբեր տատն ու քեռին, և Գուրգենը, ինչպես ինքն է գրում, մեծանում էր մայրական ընտանիքում: Պատահական չէ, ուստի, որ նրա վաղ դաստիարակության մեջ մեծ դեր խաղային տատն ու քեռին:

Տատի հետ են կապված հեքիաթներով ու աղոթքներով աշխարհը ճանաչելու և բնության հետ խոսելու մանկան հիշողությունները: Տատը սիրում էր անհավանական սիրո մասին քրդական ժողովրդական հեքիաթներ պատմել թռռանը՝ խոստանալով ամուսնացնել նրան տասնհինգ տարին լրանալուն պես: Միևնույն ժամանակ ժողովրդական կրոնական բանաստեղծություններ էր սովորեցնում նրան, որտեղ բնությունն ու աստվածային աշխարհը միահյուսված են միմյանց.

Դու անթառամ ծաղիկ ե՛ս,
Վարդի նման հոտով ե՛ս,
Փո՛ւնջ մանուշակ ազնիվ ես,

⁵¹ Տե՛ս Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, էջ 158-159: Դոր սպանության խնդիրն Մահարին անդրադառնում է նախ *Մանկություն և պատանեկություն* ինքնակենսագրական գործում, ապա ծավալում այն *Այրվող այգեստաններ* վեպում՝ սյուժեի այդ գիծը տրամադրելով վեպի կարևոր կերպարներից մեկին՝ Միհրան Մանասերյանին, որի պատումի մեջ առանցքային է քրոջ ամուսնու սպանության և նրա զավակների որբացման պատմությունը: Այս առումով ուշագրավ է Մարկ Նշանյանի վերլուծությունը, տե՛ս Marc Nichanian, *Writers of Disaster*, հ. 1, էջ 108-116:

⁵² Տատի և քեռու բացատրությունները Մահարին բերում է *Մանկություն և պատանեկություն* գործի հորը նվիրված հատվածում, տե՛ս Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, էջ 11-12: Գրիգոր Աճենյանի սպանության քաղաքական դրդապատճառների մասին տե՛ս, օրինակ՝ *Յուզեր Արմենակ Եկարեանի* (Կահիրե: Նոր աստղ, 1947), էջ 141-142:

⁵³ Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, էջ 9:

Հակառակ տատին, քեռու աշխարհը լի էր մութ գործերով: «Դաշնակցական կոմիտե» Տիգրան Միրախորյանի մոտ էին իջևանում Վանում և գավառներում սարսափ տարածած 20-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանում ազատագրական պայքարը նախապատրաստել փորձող դաշնակցական գործիչներ Արամ Մանուկյանը, Իշխանը, Վահան Փափագյանը (Կոմսը): Նրանք տարբեր կերպ, բայց հիմնականում տոհմիկ Վանա աշխարհին ոչ հատկանշական իրենց վարքուբարքով ու դրանից սերող ըմբռնումներով էին հմայում մանկանը: Իշխանը, օրինակ, գրավում էր բառերում փափուկ ր-ի կոշտ՝ ռ արտասանությամբ, իսկ տեղացի Խռանը՝ դանդաղ քայլվածքով ու շարժումով: Դրանց մեջ մութ, բայց միևնույն ժամանակ հմայիչ բան էր նշմարում պատանին:⁵⁵ Դաշնակցական գործիչներն այս առումով Գուրգենի առաջին ուսուցիչներն էին: Իշխանը նրան ծնկներին նստեցում, ատրճանակը ձեռքը տալիս և բացատրում էր, թե ինչպես «կռակել»: Իր հերթին ժրաշան պատանին չէր վարանում ձեռք բերած «գիտելիքը» նեղն ընկած պահին որպես խաղ ընկերների գլխին խաղալ: Ասենք՝ մոր անուսնական սնդուկից հորից մնացած անփամփուշտ հրացանը Իշխանից իրեն տրված նվեր ներկայացնելով՝ սպառնալ ընկերներին, թե «կկռակի», եթե իրեն ընկերախումբ չընդունեն:⁵⁶ Քեռու աշխարհում նրան գրավողը նոր, անբացատրելի այն ուժն էր, որը օգնում էր պատանուն «զարգանալ» տատի պարզ աշխարհընկալումից տարբեր՝ վտանգներով լի ճանապարհով:

Դաշնակցական գործիչները, սակայն, իրենց արտասովորությամբ չէ միայն, որ թափանցում էին պատանու կյանք: Նրանք Գուրգենին անսովոր ուժի տեր մարդիկ էին երևում և այդպիսին լինելով՝ կենդանի դյուցազուններ թվում, որոնց օրինակից ոգեշնչված պատանին իր համար ապրելու տեղ էր փնտրում աշխարհում: Սա է պատճառը, որ նա մի կողմից ակամա, մյուս կողմից էլ նպատակադրված փորձում էր յուրացնել նրանց վարքուբարքն ու աշխարհընկալումը, եթե անգամ դա իր դեմ էր հանում հասակակիցներին: *Մանկություն և պատանեկություն* գործում պահպանված մի հիշողություն լավագույնս ներկայացնում է Մահարու վաղ պատանեկան այս դրությունը.

Այն տարին ես վանքից վերադարձա հույժ «զարգացած»: Հանդիպեցի իմ ընկերներին և կարոսի ածուխ թմբերի վրա նստած՝ ես տվի իմ բացօթյա զեկուցումը Իշխանի քաջության մասին, մեկը շինելով տասը: Մտքերի փոխանակության ժամանակ Վարդանն այն կարծիքը հայտնեց, որ ռամկավար Սեպուհը պակաս քաջ չէ, և եթե Իշխանն ու Սեպուհը «գյուլաշ» բռնեն, անկասկած Սեպուհն Իշխանին «կդրխկացնի»։ Իմ պատասխանում ես փչեցի այն միտքը թե՛ իմ ներկայությամբ քսան հոգի թափվեցին Իշխանի վրա, Իշխանը ճկույթով նրանց գետին գցեց: Ակտիվ հակադաշնակցական Վարդանը խորին համոզմունքով հայտարարեց.

- Աստված որ ուզի, Իշխանին ձմերուկ կդարձնի...
- Աստված խո արմենական չի՞...

Նրանք ծիծաղեցին իմ տգիտության վրա. մի քանի անհերքելի փաստերով ապացուցեցին... որ աստվածը թունդ արմենական է:

Մի ռուպե, և միտքս լուսավորվեց.

- Աստված չկա, – արհամարհանքով ասացի ես և կեղծ հանգստությամբ ոտքի կանգնեցի:

⁵⁴ Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, էջ 9-10:

⁵⁵ Տե՛ս Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, էջ 15:

⁵⁶ Տե՛ս Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, էջ 21:

Այս աղետավոր լուզումն ամպադորդ ազդեցություն թողեց փոքրիկ ժողովականների վրա: Սկսեցին առարկել և հայհոյել: Երվանդը դիսկուսիոն կարգով այն կարծիքը հայտնեց, որ հարկավոր է ինձ մի լավ ծեծել. այս կարծիքն արժանացավ ընդհանուր հավանության, և մինչդեռ նրանք պատրաստվում էին խոսքից գործի անցնելու, ես տուն փախա:⁵⁷

Ըստ այս վկայության, մանուկների գծտության պատճառը արմենական ընտանիքներից սերող և դաշնակցական «կրթությամբ» պատանիների աստժո գոյության մասին պատկերացումների միջև հակասություններն են: Արմենական ընտանիքներից սերող ընկերախումբը իրենց հայրերի օրինակով շարունակում էր կապված մնալ այնպիսի վաղ պատկերացումների, որտեղ բնությունն ու աստված զորեղ են մարդուց, մինչդեռ դաշնակցական «կրթություն» ստացած պատանին միամիտ տատի պարզ հեքիաթների օրինակով իր համար ուժի և կարողության նոր տիպար էր կերտել և ինքն էլ իր հորինածի իսկությանը հավատալով՝ Իշխանի օրինակով փորձում էր հաստատվել ընկերախմբում: Ուշագրավ է, որ կարճ ժամանակ անց մանուկ Գուրգենի կերտած երևակայական հերոսը գործնական կյանքում նրա հակառակորդն է դառնում անականկալ կերպով, երբ նա սիրահարվում է իր մանկահասակ դրացի աղջկան՝ Նազելիին: Նրա պատկերացմամբ իրեն արժանի փեսացուն միայն Իշխանը կարող էր լինել, քանի որ նա ուժեղ էր ու նաև՝ հոր մտերինը: Որքան էլ պատանին իր հորինած խաղին հավատալով ջանում է ցույց տալ սիրած աղջկան, թե իր «զինակից» Իշխանի հետ կգան կայրեն իրեն մերժած աղջկա տունը, Նազելին անդրդվելի էր մնում այն հարցում, որ սերելով քաղաքում հարստությամբ ու դիրքով երրորդը կամ չորրորդը եղող ընտանիքից՝ նա չէր կարող իրեն ոչ արժանի փեսացու ընտրել:⁵⁸ Մերժված պատանին որբացման առաջին զգացումն այստեղ է ձևակերպում. «Ես թեքվեցի ջրհորի վրա և նրա հայելում տեսա իմ մենակ, մերժված, որբացած գլուխը...»:⁵⁹ Իսկ որբացման զգացման ակունքում, փաստորեն, նրան հմայած և կրթած իր տիպար հերոսն էր՝ Իշխանը, որն այս դեպքում ականայորեն «դժբախտացնում» է նրան:

Մահարու որբական դրությունը՝ երկատվածությունը պարզ ու միամիտ պատկերացումներով ապրող տատի ու գաղափարական պայքարին զինվորագրված քեռու մութ աշխարհների միջև, հատկանշական էր 20-րդ դարասկզբի Վանի հասարակական կյանքին: Մահարու ընտանեկան կյանքի օրինակով կարելի է տեսնել ազգային կուսակցությունների մուտքով Վանի հասարակական կյանքում առաջ եկած երկփեղկումը: Մի կողմում Յուղաբեր տատի պարզ պատկերացումներով ապրող աշխարհն էր: Որքան էլ դաշնակցական շրջանակներում Յուղաբերին «դաշնակցության մայրիկ» էին կոչում, նա մեղմ ասած չէր համակրում ոչ որդու գործունեությունը, ոչ էլ այն, որ կուսակցությունների Վան ներթափանցմամբ պառակտվել էր քաղաքի խաղաղ առօրյան: Յուղաբերը մանավանդ անզիջում էր աղքատ գյուղացիներին բռնի, իրենց վերջին ունեցածով զենք ձեռք բերել տալու դաշնակցական գործելակերպի հանդեպ:⁶⁰ Դժվար է պնդել, որ որդու հետ ունեցած նրա տարածայնությունները գաղափարական էին այն իմաստով, ինչ իմաստով գաղափարականությունը նկատի էին առնում կուսակցական գործիչները: Նրա պատկերացումներն ավելի շուտ սերելով խղճի ու աստվածավախության ժողովրդական պատկերացումներից՝ իրենց մեջ այն համոզմունքն

⁵⁷ Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, էջ 20-22: Հատվածն ամբողջությամբ տես նաև *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, <https://bit.ly/3WTyMfC>, այց 10 օգոստոսի 2022 թ.:

⁵⁸ Տե՛ս Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, էջ 25:

⁵⁹ Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, էջ 25:

⁶⁰ Տե՛ս Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, էջ 16-19:

էին խտացնում, որ նույն բնության ծնունդը լինելով՝ իրենք բոլորը նույնն են որպես բնությունից իրենց հացը քրտնաջան վաստակող մարդ արարածներ արարածներ: Այս պատկերացումների շրջանակներում էր նրան անըմբռնելի մարդու քրտնաջան աշխատանքով վաստակած հացով զենքի ձեռք բերելու դաշնակցական գործիչների գործելակերպը, որքան էլ այն արդար նպատակի համար լիներ:

Հասարակական կյանքի մյուս կողմում սոցիալական ու քաղաքական ծանր պայմաններից օտար լուծը թոթափելու երազանքով Վանում ծնունդ առած արմենական շարժման և ազգային հեղափոխական գործը կազմակերպելու նպատակով Կովկասից Վան թափանցած դաշնակցական ու հնչակյան գործիչներն էին, որոնց միջև տարածայնությունները ոչ թե հայության ազատագրության գաղափարին էր վերաբերում, այլ այն կյանքի կոչելու ուղիներին: Եթե հնչակյաններն ընդհանուր, իսկ դաշնակցականները մասնակի ապստամբության ճանապարհով էին պատկերացնում ազատագրության գործի հաջողությունը, ապա, ինչպես արմենական գործիչ Արտակ Դարբինյանն է գրում. «Արմենականները կը պայքարէին դաշնակցականներու այդ թեթևութեան դէմ»: Նրանց համոզմունքն այն էր, որ պետք էր նախ կրթել ժողովրդին, զինել նրան, «յետոյ պատեհ հանգամանքներու մէջ շարժիլ, եթէ այդ հանգամանքները հակառակ մեր ցանկութեան կ'ուշանան, պէտք է համբերատարութեամբ շարժիլ»:⁶¹ Արմենականները հատկապես դեմ էին դաշնակցական գործիչների զինված տնտուռն շրջելու ցուցադրական գործելակերպին, գյուղացիներից ազատագրության գործի համար բռնի միջոցներով հարկ պահանջելուն ու գյուղերի բարեկեցիկ ընտանիքներին՝ «պուրժուաներին», ի տես գյուղացիության ծեծելու կամ բանտարկելու գործելակերպին: Նրանք համոզված էին, որ այդ կերպ ատելության ու զզվանքի զգացումներ ծնելով ժողովրդի մեջ՝ խանգարում են հեղափոխական գործին:⁶²

Դաշնակցական գործիչներն իրենց հերթին մտածում էին, որ Արմենական կուսակցութիւնը, Վան քաղաքի ծնունդը լինելով, իր որդեգրած գործելակերպով պարփակված էր միայն Վանում: Նրանց համոզմունքն այն էր, որ արմենականությունը բացառապես տեղացի մտավորականների ու առևտրականների կուսակցությունը լինելով՝ խրտնում էր իրենց ինչպես ««յախուռն եւ ցուցական» աշխատանքներից», այնպես էլ ապստամբ գործողություններից»:⁶³ Տուն ու ընտանիք թողած և հեղափոխությունն իրենց կյանքի գործը դարձրած դաշնակցական գործիչները տարբեր ճանապարհներով, այդ թվում նաև՝ ահաբեկությամբ էին ներթափանցում ժողովրդական կյանք: Համաշխարհային պատմության բազմաթիվ օրինակներ հիշելով՝ նրանք պնդում էին, որ ազատագրության գործն առանց զոհողությունների չէր կարող լինել: Նրանց իսկ վկայությամբ իրենց շրջանակներում տիրապետող էր համոզմունքը, թե ազատագրության գործին զինվորագրվածը «մարդի տեղ բռնելու, պայմաններին յարմարուելու համար կամաց-կամաց պէտք է կոշտանար, ինտելիգենտութիւնը կորցնէր, հայիոյել սովորէր,– կարճ «զինուոր» դառնար», ինչի արդյունքում ժողովրդի մեջ ոչ անհիմն այն կարծիքն էր

⁶¹ Արտակ Դարբինեան, *Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուլի 1890էն 1940)* (Փարիզ: Հայ ազգային հիմնադրամ, 1947), էջ 152: Հատվածն ամբողջությամբ տես նաև՝ *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, <http://moderities.am/ցանկության-ու-նպատակի-միջև-վանում-կազ/>, այց 12 դեկտեմբերի 2022 թ.:

⁶² Դարբինեան, *Հայ ազատագրական շարժման օրերէն*, էջ 153:

⁶³ Վահան Փափազեան, «Անցած օրերից», *Հայրենիք*, 1924, թիվ 10, էջ 104:

ծնավորվում, թե՛ «Դաշնակցականը զինուոր պիտի լինի, տեռոր պիտի կատարե, անպայման փախստական պիտի դառնայ»:⁶⁴

Ինչպես կարելի է տեսնել, երկու կուսակցությունների ըմբռնումները տարամիտում են հեղափոխությունը կյանքի կոչելու եղանակների հարցում, ինչից ելնելով էլ՝ ի տարբերություն արմենականների դաշնակցականներն ազատագրական գաղափարներին նվիրվածության հարցում ավել մոլի են դառնում՝ անդին անցնելով Վանի ընդհանուր հասարակական-մշակութային կյանքում ընդունված պատկերացումներից: Իսկ տոհմիկ թագավորամիստ, ապա առևտրական քաղաք համարվող Վանը, 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին արևմտահայ կրթական-լուսավորական կենտրոններից մեկը լինելով, թեև աչքի էր ընկնում ժամանակի զարգացածության ցուցիչը հանդիսացող դպրոցներով, թատրոնով, թերթերով ու հանրային գրադարանով, բայց ըստ պահպանված վկայությունների շարունակում էր խորը պահպանողական աշխարհ մնալ հատկապես ընտանեկան նիստուկացի մեջ գերդաստանային կացութաձևերին իր կառչածությամբ:⁶⁵ Այս առումով ուշագրավ են հատկապես Վանի հասարակական կյանքին վերաբերող ազգագրագետ Երվանդ Լալայանի դիտարկումները:

Քաղաքին նվիրված իր ուսումնասիրության մեջ Լալայանը նկատում է, որ 20-րդ դարասկզբին Վանում չկային հասարակական վայրեր՝ զբոսարաններ ու ժողովարաններ, իսկ մի քանի սրճարանները, որոնք երեկոները հիմնականում դատարկ էին, ցերեկները նշանավորվում էին մի քանի անգործ մարդկանց այցելություններով: Քաղաքն ընդհանուր առմամբ ամայանում էր երեկոյեան ութից:⁶⁶ Վանում կանայք խստորեն պահում էին ավագության կարգը և առհասարակ զրկված էին ընտանիքից, ինչպես նաև կանանց աշխարհից դուրս այլ միջավայրերում լինելու հնարավորությունից, իսկ տղամարդկանց կյանքը սահմանափակված էր աշխատանքով ու ընտանիքով:⁶⁷ Այս կենցաղավարությունը, ըստ Լալայանի, բերում էր նրան, որ «Վանում չկա[ր] հասարակական կեանք, իւրաքանչիւր գերդաստան կամ ընտանիք ապրում է[ր] առանձնացած, ինքն իրեն»: Նա մինևույն ժամանակ նկատում է, որ.

Այս կղզիացած գերդաստանի մեջն էլ դժբախտաբար չի թագաւորում սէր և խաղաղութիւն: Տեգերկիների մէջ խռովութիւնը, բամբասանքը, ատելութիւնը, մախանձը մշտատև երևոյթներից են. պուտկի եռ՝ տեգերկնկան խեռ (խռովութիւն, քենախնդրութիւն) ասում է տեղական առածը, նմանեցնելով սրանց խռովութիւնը խեցիի մէջ դրուած կերակրի եռման, որ երբէք չի դադարում:⁶⁸

Միմյանց հանդէպ քինոտությամբ լցված ընտանեկան կյանքը, փաստորեն, կայուն ներփակ աշխարհ էր դարձել, ինչն իր հերթին նույն Լալայանի դիտարկմամբ առաջ էր բերել «նոր սերնդականներ, որոնք հակառակ ծայրայեղութեան են հասել՝ ժխտելով

⁶⁴ Արամ, «Յուշեր», *Հայրենիք*, 1923, թիվ 10, էջ 136, Հատվածն ամբողջությամբ տե՛ս նաև *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, <http://modernities.am/կուսակցական-գործչի-և-մարդու-միջև-արամ/>, այց՝ 10 օգոստոսի 2022 թ.:

⁶⁵ Վանի կրթական և մշակութային կյանքի մասին տե՛ս օրինակ՝ Համբարձում Երամյան, *Յուշարձան Վան-Վասպուրականի*, Կ. Բ (Ալեքսանդրիա: Արամ Ստեփանյան, 1929), էջ 28-34:

⁶⁶ Տե՛ս Երվանդ Լալայան, «Վան, Տոսպ և Հայոց ձոր. մարդաբանական համառոտ տեղեկութիւններ», *Ազգագրական հանդէս*, 1910, գիրք XX, թիվ 2, էջ 189: Տե՛ս նաև *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, <http://modernities.am/ազգակցական-սիրո-և-քինախնդրության-միջ/>, այց՝ 10 օգոստոսի 2022 թ.:

⁶⁷ Վանի առօրեականության մասին հարուստ տեղեկություններ է տալիս նաև Վրթանես Փափագյանն իր «Նամակներ թուրքաց Հայաստանից» ուղեգրության մեջ: Տե՛ս Վրթանես Փափագյան, *Երկերի ժողովածու*, Կ. 5 (Երևան: Հայպետհրատ, 1959), էջ 398-485:

⁶⁸ Լալայան, «Վան, Տոսպ և Հայոց ձոր», էջ 190:

միանգամայն ընտանիքը և ազատ սեր քարոզելով»:⁶⁹ Նոր սերնդականները
Դաշնակցության երիտասարդական թևն էին Վանում:

Ինչպես կարելի է տեսնել, 20-րդ դարասկզբի Վանն աչքի էր ընկնում ընտանիքի վրա
կենտրոնացածությամբ: Այս համատեքստում փոխվում է իհարկե դաշնակցական ու
արմենական գործիչների միջև լարումների անկյունը: Քաղաքական կուսակցությունների
միջև առաջ եկած գաղափարական տարածայնություններն անմասն չէին, փաստորեն,
ներփակ ընտանեկան կյանքի ստորին մակարդակում եռացող կրքերից: Ուրեմն, այս կամ
այն կերպ լարումների դաշտում հայտնվում էին սովորության կենսաձևերը և դրանք նոր
իդեալներով փոխելու արմատական դիրքավորումները, որոնք քաղաքականությունների
մակարդակում որպես գաղափարական տարամիտումներ էին արտահայտվում:

Վաղ որբացած և հասարակական-մշակութային այսպիսի պայմաններում հասակ առած
պատանի Գուրգենի կյանքի որբական ողիսականը շարունակվում է նաև Վանը
պատուհասած աղետալի դեպքերին հաջորդած օրերին: Գաղթի ճանապարհին կորցնելով
հարազատներին՝ պատանին հայտնվում է որբանոցներում, որտեղ նրա երևակայությունն
այլ չափում է ձեռք բերում: Պատանու կյանքից վերանում է երկատվածության
բարդություններով ուղեկցվող, բայց ամեն դեպքում մանկան կյանքում որոշակի
հաստատունություն ապահովող ընտանեկան կյանքը: Կրկին որբացած պատանին
հնարամիտ է դառնում հիշողության բեկորներն ու կյանքի կոնկրետ պայմանները միմյանց
կապելով ապրելու հնարավորություններ ստեղծելու հարցում: Օրինակ՝ հիշողության մեջ
մնացած երգի բառերից իր անունը մոռացած տարիքով փոքր որբ ընկերոջը նա
երևակայության ուժով տարօրինակ Բիլի Մակ անվամբ է կնքում և, ընտելացնելով իրեն ու
«շնորհված» արտասովոր անվանը, նոր ընտանիք է ստեղծում՝ ինքն էլ ականայորեն
հայտնվելով անուն շնորհողի հայրական դիրքում:⁷⁰ Այս պայմաններում է նաև, որ
փողոցային կյանքի ու ստեղծարար հնարամտության հմայքին տրված պատանին
հաճախ չափն անցնում ու սանձարձակ է դառնում:⁷¹ Եթե ստեղծագործ ուժերին ենթակա
որբն առաջին դեպքում ընտանեկան պարզ կյանքից սերող եղանակներով նոր «փոքրիկ
ընտանիք» էր ստեղծում, երկրորդ դեպքում նույն ընտանեկան սահմանափակող կապերից
ազատված՝ փոքրիկ վայրենի էր դառնում:⁷² Ընտանիքից զրկված, բայց ընտանիք բաղձող
այս որբը միևնույն ժամանակ ընտանեկան կապերը կտրած այն «վայրենին» է, որը չի
կարող ստեղծագործ չլինել, քանի որ ինքն է իր կյանքի պայմանները ստեղծողը:
*Չակասական այս կենսաձևը որբացած մանկան կյանքի օրինաչափ եղանակն է դառնում,
որի մեջ արտահայտվում են նաև վաղ որբացած պատանու ընտանեկան կյանքի հետ
ունեցած բարդ հարաբերությունները, Մահարու դեպքում՝ բարդացած նաև ծնողազրկման
քաղաքական հանգամանքներով: Այս առումով նրա իսկ թողած դարձյալ ուշագրավ ևս
մեկ վկայություն ունենք:*

Մանկություն և պատանեկություն գործի դրվագներից մեկում Մահարին հիշում է, որ
փողոցներից որբերին հավաքող խնամատարների խոստումը, թե որբանոցում նոր շորեր
կտան և այլ քաղաք կտանեն, ազդեցություն չի թողնում փողոցային կյանքին վարժված
իրենց ավազակախմբի վրա: Նրանք չեն զայթակղվում խնամակալների խոստումներով:
Բայց իր վրա շանթող տպավորություն է թողնում խնամատարների հորդորը, թե

⁶⁹ Լալայեան, «Վան, Տոսպ և Չայոց ձոր», էջ 191: Ի դեպ, սա այն խումբն է, որը ծեծի էր ենթարկել նաև
Մահարու հորը և հավանաբար մաս կազմել նրա սպանությանը: Այս, ինչպես նաև նորսերնդականության
մասին տես Երամյան, *Յուշարձան Վան-Վասպուրականի*, հ. Բ, էջ 62, 66-69, 61-66:

⁷⁰ Տես Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, էջ 83-93:

⁷¹ Տես Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, էջ 93-98:

⁷² Տես Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, էջ 98-101, 108-118:

ուսումնարան կբացեն, «կսովորեն, մարդ կդառնան»։ «Բոպեական կայծակի լույսով կարծես լուսավորվեց իմ անցյալը: Ես հիշեցի հորս նկարը, գիրքը ձեռքին կարդալիս. հետո նրա մահից հետո մնացած գրքի սնդուկները, իմ առաջին աշակերտական տետրերը, «Մեղրագետ»-ը, դասարան, նստարաններ, գրատախտակ, կավիճ, քարետախտակ, քարեգրիչ»:⁷³ Մանկան վաղ հիշողություններից կենդանություն է առնում մտավորական հոր պատկերը: Փողոցային պատանին, կրթությամբ մարդ դառնալու խոստման որոշակիությունն այս հարթության մեջ շոշափելով, հուզականորեն կապվում է առևտրական գերդաստանից սերող իր մտավորական ճյուղին և հնազանդվելով խնամատարներին՝ որբանոց գնում:

Այս համատեքստում պետք է դիտարկել նաև 1910-ական թթ. վերջերին *Վան Տոսպ* և *Ժողովուրդ*

թերթերում լույս տեսած Մահարու հրապարակախոսական փոքրիկ ակնարկներում որբերի դաստիարակությանը վերաբերող դիտարկումները: Արձագանքելով որբերից քաղաքացիներ պատրաստելու խորհրդահայ առաջին շրջանի քաղաքականություններին՝ նա որբերի կրթությունը նույնպես երկու՝ նրանց բարոյական անկումից փրկելու և աշխատունակ ու ժիր քաղաքացիներ պատրաստելու տեսակետից է կարևորում:⁷⁴ Կրթությունը Մահարին լայն՝ թե՛ մտավորական պատրաստության, թե՛ արհեստագործական զբաղմունքների իմաստով է նկատի առնում: Առանց գերազնահատելու մեկի կամ մյուսի նշանակությունը՝ մշակվող քաղաքականություններից նա ակնկալում է այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան մանուկներին շահկապել իրենց հիշողություններում մնացած ընտանեկան աշխարհն ու նոր կյանքը: Օրինակ, երբ կարևորում է գյուղատնտեսական ուսումնարանների ստեղծումը, նա համոզված է, որ նոր կրթությամբ նրանք չեն մոռանա «իրենց մաքուր ու քրտինքոտ անցեալը», իսկ երբ «շնորհալի որբերի» կրթության շարունակության հարցն է բարձրացնում, հավատացած է, որ նրանց համար նախատեսված «համապատասխան աշխատանքն» այլ բան չի լինի, քան նրանց կրթության շարունակությունը:⁷⁵ Լայն առումով պատանի Մահարու պատկերացմամբ հոգեխոցված, միուղի զարգացումից զուրկ, ձեռքից ձեռք անցնող որբը, զրկված լինելով հաստատուն ներքին աշխարհ ունենալու հնարավորությունից, իր ստացած կրթությամբ ընտանեկան աշխարհին կապվելով միայն կարող է կայանալ որպես նոր երկրի պիտանի քաղաքացի: Այս համոզմունքով է, որ նա որբերի խնամատարությունից ակնկալում է, որ վերջիններս իրենց քաղաքականություններով արմատապես չկտրեն որբերին նրանց հիշողություններում մնացած ընտանեկան աշխարհից:

Որբական փորձառության այս հենքի վրա էր միսուրայուն ստանում *Այրվող այգեստաններ* վեպը: Ուշադրության կենտրոնում պահելով ընտանեկան աշխարհն ու նրանից սերող սովորությունները՝ Մահարին դրանք միևնույն ժամանակ տեսնում էր փոփոխվող կենսապայմանների մեջ: Պատահական չէ, ուստի, որ այս հետնախորքին հղացված վեպը նրա անձնական ու ստեղծագործական աշխարհում յուրօրինակ տեղ գրավեր՝ շոշափելով ոչ միայն այն հակասական հարաբերությունները, որոնք ի հայտ էին եկել 20-րդ դարասկզբի տոհմիկ ավանդույթներով ապրող Վանի հայության կյանքում՝ նրանց աշխարհի թափանցած քաղաքական կուսակցությունների գործունեությամբ, այլ նաև սերում էին ներքին կնճիռներով ու բարդություններով լի իր իսկ որբական

⁷³ Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, էջ 99:

⁷⁴ Այս շրջանի որբախնամ քաղաքականությունների մասին տես Ներսեսյան, *Որբաքաղաքը*, էջ 43-91:

⁷⁵ Տես «Որբերը՝ հողին», ըստ՝ *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 11 (Երևան: Անտարես, 2017), էջ 40-41, ինչպես նաև «Մեծ որբերու հարցը», *Ժողովուրդ*, 13 նոյեմբերի 1918 թ., էջ 31:

փորձառությունից: Իր իսկ ընտանեկան պատմության շրջագիծը՝ որպես ավանդական կացութաձևերով հատկանշվող տոհմիկ աշխարհի և այն նորոգել փորձող քաղաքական կուսակցությունների հեղափոխական գործունեության ներքին հակասություններով օժտված մի պատմություն ընդլայնելով՝ վեպում առանցքային տեղ է սկսում գրավել ներփակ ընտանեկան կյանքն իր ներքին բարդություններով բացելն ու պատկերելը:⁷⁶

Վանը՝ տոհմիկ աշխարհ

Վեպում Վանը՝ որպես աշխարհ ներկայացված է Մուրադխանյան գերդաստանի չորս զավակների և մնացած վանեցիների ճյուղավորվող պատումների միջոցով: Մուրադխանյան տոհմի երկու զավակները՝ Յամբարձունը և Օհանեսը, հոր գործի շարունակողներն են՝ առևտրականներ: Ավագ զավակը լինելով՝ Յամբարձունը, ժառանգության իր բաժնով հեռացել է հայրական տնից և ավելի մեծ աշխարհի մեջ կայանալու հեռանկարով հաստատվել Պոլսում: Նա երկու զավակ ունի, ինչպես նաև հասարակաց տներ այցելելու ու թեթևաբարո կանանց հետ ժամանակ անցկացնելու թուլություն: Տնից հեռանալով և մեծ աշխարհի մեջ հաստատվել փորձելով՝ Յամբարձունը կորցրել է կապը հայրական ընտանիքի ու հայրենի աշխարհի հետ: Ի տարբերություն մեծ եղբոր, Օհանեսը մնացել է Վանում և պահել հայրական ժառանգությունը հայրենի աշխարհում: Նա թեև ամենամեծ կարողության տերը չէ քաղաքում, բայց հայտնի առևտրականներից մեկն է: Օհանեսը երեք զավակ ունի: Նա ըստ էության հայրական հարստության շարունակողն է վեպում: Ընտանիքի կրտսեր զավակը Մխիթարն է: Զբաղվելով մշակությամբ՝ ընտանեկան գործերն է շարունակում գյուղում: Քչով գոհացող համեստ աշխատավոր է Մխն: Նրա աշխատանքով է լցվում քաղաքաբնակ Օհանեսի տունը: Եվ ի վերջո, ընտանիքի միջնեկ զավակը՝ Գևորգը, ուսուցիչ է դպրոցում: Քաղաքում հայտնի է նաև որպես ճարտար հռետոր: Գևորգն ունի մեծ իդեալներ, որոնք դժվարացել է կյանքի կոչել Վանի ներփակ աշխարհում: Հորից ժառանգություն մնացած բաժինը օղու բաժակի մեջ խեղդելով՝ նա շարունակում է նույնը անել պարտքով կամ եղբոր հաշվին: Թեև ամուսնացած է, բայց չի երջանակացրել կնոջն ու զավակներ չունի:

Այս հակիրճ ամփոփումից կարելի է հասկանալ, որ Մուրադխանյան գերդաստանն ունի հաստատված ընտանեկան կյանք, որի մեջ առանցքային կարևորություն է տրված գործով և ժառանգներ ունենալով տոհմային գիծը շարունակելուն: Ընտանեկան այս կարգից իրենց վարքուբարքով շեղվում են Յամբարձունն ու Գևորգը: Խոտորելով ընտանեկան դրվածքից՝ նրանք խորթացել են մեծ ընտանիքին, ինչի արդյունքում Յամբարձունն ի վերջո մահանում է օտարության մեջ, ըստ բերնբերան տարածված խոսակցությունների, ձեռք բերված «գեշ հիվանդությունից», իսկ Գևորգը, որն իր վարքուբարքով մի «ամոթ էր՝ խարանված Մուրադխանյան գերդաստանի ճակատին», զոհվում է Վանի

⁷⁶ Վեպում հայրենի աշխարհը Մահարին նույնպես կերտում է իր հիշողություններից: 1964 թվականի հունիս 22-ին Էդուարդ Թոփչյանին ուղղված մի նամակում հեղինակը գրում է. «Ոչ մի «աղբյուր» չունեմ, ամբողջ «աղբյուրը» ես եմ և իմ դեռ պայծառ հիշողությունը, հաճախ՝ ինտուիցիան»: Նույն նամակում, ինչպես նաև մեկ շաբաթ անց Վահագն Դավթյանին ուղղված մեկ այլ նամակում նա խոսում է այն մասին, որ ամերիկաբնակ գրող ընկերոջից՝ Անդրանիկ Անդրեսայանից խնդրել է Արտակ Դարբինյանի *Հուշերը* և Ա-Դոյի *Մեծ դեպքերը Վասպուրականում* գրքերը՝ վերջին գլուխները գրելիս «փաստական-անվանական կողմը ճգրտելու համար»: Մահարի, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 15(1), էջ 109-110; 112: Խոսքը Արտակ Դարբինյանի վերը նշած գործի և դաշնակցական պատմաբան Ա-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյանի) *Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին* (Երևան: Լոյս, 1917) գրքերի մասին է: Երկունս էլ ականատեսների պատմություններ են, որտեղ մանրամասնություններով ներկայացված են Վանում 20-րդ դարասկզբին տեղի ունեցած դեպքերը:

ինքնապաշտպանությանը՝ հերոսանալով ու այդ կերպ արժևորելով իր անպետքացած կյանքը: (539)

Ընտանեկան պատումի ներսում, փաստորեն, մեծ կյանքի երազանքով ընտանեկան աշխարհից հեռացած զավակները կորած են ընտանիքի համար ու մեծ վտանգների ենթակա՝ դատապարտված կորստյան այս կամ այն կերպ: Այս է պատճառը, որ մոր աչքին Չամբարձունը իրենցից հեռու, օտար աշխարհում «որը ու մենակ» մեկն է երևում, իսկ Գևորգը՝ իր խեղճ ու տեղը չգտած զավակը: (138) Մեծ կյանքի երազանքին տրված երկու եղբայրներն իրենց հերթին մասը չեն դառնում մեծ աշխարհի: (528) Չարագատներին ուղղված հրաժեշտի նամակում Չամբարձունը խորը կարոտ է արտահայտում հայրենի բնության և ուտելիքների հանդեպ ու անծոք հնչեցնում Պոլսի ամենակուլ սովորությունների հասցեին: Գևորգը՝ այդ «մեծ մանուկը», մութ գործերի մեջ մտնելով դաշնակցական գործիչների հետ, փորձում է գործնականորեն կյանքի կոչել ազգի ազատագրության իր վաղեմի ցանկությունը: Այս է պատճառը, որ նույնիսկ Վանի ինքնապաշտպանության ամենածանր օրերին նա չի կարողանում ընդունել, որ Վանը կարող է չլինել: Մեծ աշխարհը նրա հայացքում ազատագրված Վանի կյանքն էր: (517) Ընտանեկան պատումի ներսում երկու եղբայրներն իրենց ապրած կյանքով որևէ բան չավելացնելով ընտանեկան հարստությանը՝ ի վերջո կորչում են անհուշ-անհիշատակ:

Այս տրամաբանության մեջ հայրական տունը չեն են պահում և դրա մեջ իրենց բարօրությունը գտնում միայն Օհանեսն ու Մխոն: Թեև Մխոն նույնպես հեռացել էր հայրական տնից, բայց նա «գնաց գյուղ, կապվեց արտ ու ափին ու գյուղում նստած, դարձավ քաղաքի տան շենքն ու շնորհքը»: (114) Մոր աչքին նա էր քաղաքի տան թիկունքը, քանի որ հայրական տունն ապահովում էր Աստուծոց տրված ու մարդկային աշխատանքով սրբացված բարիքներով՝ առօրյա հացով: (119) Օհանեսն ընտանիքի միակ զավակն է, որը ոչ միայն հայրական գործի, այլ նաև հայրական գծի շարունակողն է վեպում: Ծածկամիտ, հաշվենկատ, մարդկային զարգացման և առաջադիմությունների հանդեպ ոչ անտարբեր, երեք զավակների հայր ու տունը չեն պահող Օհանեսով է հաստատուն մնացել հայրական օջախն ու շարունակվել տոհմը:

Մուրադխանյան ընտանիքում սրբորեն գործում է ավագության կարգը: Մխոն հարգանք ու պատկառանք ունի ավագ եղբոր հանդեպ, երբեք բարձրաձայն չի արտահայտում իր ցանկությունները, շնորհակալ է եղբոր՝ իրեն և կնոջը բաշխած նվերների համար: Մխոն ժուժկալ է ու սակավապետ: Նույն կերպ նա փորձում է պահել նաև իր ընտանիքը, «ավելի շատ բարիք տանելու համար քաղաք, լեցնելու համար իր մայրենական տան մառաններն ու ամբարները»: Նրա մտքով երբեք չի անցնում, որ մեծ ընտանիքին նվիրման դիմաց, միևնույնն է, «մայրենական տանը հրամայող է ոչ թե ինքը, այլ իր եղբայրը, ոչ թե իր կինը, այլ իր եղբոր կինը»: (89) Նա ականջալուր չի կնոջ դժգոհություններին, թե մեծ եղբայրն առանց շահախնդրության իրեն շորացու չի բաշխի: Օհանեսի կինը՝ Սաթենիկը, նույնպես պահում է ավագության կարգը սկեսրոջ և նույն կերպ, որպես ավագ հարս, իրենից կրտսեր տեգերկնոջ՝ Գևորգի կնոջ՝ Վերժինի հանդեպ:⁷⁷ (20-21)

Այսքանով հանդերձ Մուրադխանյան տան պատումը Մահարին ներկայացանում է որպես ներսից փոքր ընտանիքների բաժանվող առանձին պատումների հանգույց, որի

⁷⁷ Չայոց սովորության կյանքում ավագության կարգի մասին դիտարկումների համար տես Վրթանես Փափազյան, «Իրաւաբանական սովորութիւններ», *Ազգագրական հանդես*, 1889, թիվ Դ, II, էջ 253-26, ինչպես նաև՝ Խաչիկ Սամուէլեան, «Մայրական իրաւունքը (Տեսութիւն հայ սովորութեան իրաւունքից)», *Ազգագրական հանդես*, 1908, Գիրք XVII, էջ 127-141, 1908, Գիրք XVIII, էջ 60-90, 1910, Գիրք XIX, էջ 36-58:

կենտրոնում կանգնած Օհանես աղան, չնայած գործադրած ջանքերին, չի կարողանում մեծ գերդաստանի տրոհման և այդ ճանապարհով արդիացող գերդաստանային հարաբերությունների դեմն առնել: Նա փորձում է ամեն գնով պահել հայրական օջախի ամտեղիտալի հեղինակությունը՝ բոլոր հանգամանքներում մեծ ընտանիքի հատվածներն իր հովանու տակ առնելով: Նա իր հարկի տակ է ընդունում զոհված եղբոր կնոջը, հուզականորեն ընկճվում Պոլսում գտնվող եղբոր զավակներին օգնել-չօգնելու հարցում և ի վերջո նրա խնամքի տակ է մայրը՝ Սրբուհին: Այս համատեքստում է, որ նա չի մոռանում գործնական շահախնդրությամբ մոտենալ ընտանեկան կյանքին: Երկար ծանրութթև է անում, օրինակ, եղբոր որդիներին կրթության տալու հոգսն իր վրա վերցնելու Պոլսում նստած Յամբարձունի կնոջ առաջարկները՝ ի վերջո հակվելով նրան, որ Պոլսում նստած Յամբարձունի կինը խորամանկելով փորձում է իր հոգսը դնել անուսնու եղբոր ուսերին: Նույն տրամաբանության մեջ Վերժինին իր հոգածության տակ առնելով՝ մտածում է նաև, որ նա կօգնի կնոջը ընտանեկան հարցերում: (542)

Պատումից ակնհայտ է, որ ընտանեկան հարաբերությունների խորքում աշխատում են հարազատ աշխարհին տեր կանգնելու սովորության ուժերը:⁷⁸ Իր միջավայրում որոշակի դիրք և հեղինակություն վայելող Օհանեսը թեև օժտված է կենցաղային մանր շահախնդրություններով և հաճախ է նախընտրությունը տալիս զգացողություններով առաջնորդվելուն ու կողմնորոշվելուն, նա նաև ժամանակի առաջադեմ մտայնությունները յուրացրած մեկն է: Թեև լիովին չի տրվում նախապաշարուններին, բայց բոլորովին չի էլ ամտեսում դրանք: Օրինակ, «որպես լուսավորված մարդ, նա ոչ մի նշանակություն չէր տալիս» վատ երազներին, դրանք բացատրում էր իր չափով «գիտականորեն», ասենք՝ վատ մարտողությամբ, բայց միևնույն ժամանակ լռելյայն շոշափում էր դրանց առաջ բերած զգացողությունները: (19) Օհանեսը սովորության կապերով կապված է այն աշխարհին, որի ծնունդն է: Նա, բացված լինելով ժամանակի առաջադիմության հանդեպ, միևնույն ժամանակ կրկնելով յուրացնում այն բարոյականությունը, որը կանգուն էր պահում Վանը որպես տոհմիկ աշխարհ:⁷⁹

Այս համատեքստում ընդլայնվում են Օհանեսի ներքին տագնապները: Նա խորը թախծ է ապրում այն մտքից, որ «Մուրադխանենց մեծ տունը հաստատուն պահելու» նպատակով ծնված չորս զավակները, որոնցից ամեն մեկը մի հսկա լինելով, բաժանվել, յուրաքանչյուրն իր բաժինն առած իր ճանապարհով գնալով՝ «գազանի բուն» են դարձրել հայրական տունը: (132) Այս համատեքստում եղբայրների ու նրանց ընտանիքների հանդեպ Օհանեսի մոտ արթնացած զգացմունքները ավելին են, քան եղբայրական զգացմունքները: Դրանք հայրական զգացմունքների են վերածում, որոնց մեջ երևում է հայրական դիրքում հայտնված հերոսի ներքին հակասությունները: Օհանեսի փորձառության միջով Մահարին պատկերում է տոհմիկ ըմբռնումներով ապրող Վանի ինքն իր ներսից արդիանալու ներքին բարդությունները: Նա իր մեջ խտացնում է խաղաղ արիեստներով իրենց հացը վաստակող ու համայնական կապերով ապրող աշխարհի

⁷⁸ Նահապետական հայ ընտանիքի սովորության կենսաձևերն ու հարաբերությունների մասին տե՛ս Խաչիկ Սամուելեան, «Հայ նահապետական գերդաստանը (Տեսութիւն հայ սովորութեան իրաւունքից)», *Արարատ*, 1908, ԽԱ տարի, համար Բ, էջ 172-182; ԽԱ տարի, համար Գ, էջ 263-275; ԽԱ տարի, համար Դ, էջ 396-407; ԽԱ տարի, համար Է-Ը, էջ 633-649; ԽԱ տարի, համար Թ, էջ 764-780:

⁷⁹ Հայության սովորության բարոյականության մասին տե՛ս Երուանդ Լալայեան, «Գերդաստանի անդամների իրաւաբանական յարաբերութիւնը», *Ազգագրական հանդէս*, 1896, թիվ Ա, էջ 289-296, ինչպես նաև Խաչիկ Սամուելեան, «Հայ ընտանեկան պաշտամունքը (Տեսութիւն հայ սովորութեան իրաւունքից)», *Ազգագրական հանդէս*, 1904, Գիրք XII, էջ 203-234; Խաչիկ Սամուելեան, «Հայոց ժառանգական իրաւունքը (Տեսութիւն հայ սովորութեան իրաւունքից)», *Ազգագրական հանդէս*, 1907, Գիրք XV, էջ 68-84; Գիրք XVI, էջ 117-129: Վեպում այս գիծը բնորոշ է գրեթե վանեցի հերոսներից բոլորին, եթե նրանք այս կամ այն կերպ չեն շեղվել նույն ավանդույթից, ինչպես Մուրադխանյան տան երկու զավակները:

քայքայման բարդությունները: Մուրդախանյան ընտանիքի օրինակով Մահարիմ ներկայացնում է նոր կյանքն ընդառաջող տոհմիկ ավանդույթներով ապրող աշխարհի *ներսից արդիանալու* վտանգներով հղի պրոցեսը: (496; 352-353)

Համայնական կապերով հատկանշվող խաղաղ կացութաձևի վրա հիմնված աշխարհի պատկերացումը հատկանշում է վեպի բոլոր վանեցի հերոսներին: Այն նրանց բարոյական ըմբռնումների հիմքն է և այս հարցում նրանք տարածայնություններ չունեն: Վանեցիների աչքին իրենց աշխարհը երկրային դրախտ է: «Անդենականում դրախտը, աստեղականում՝ Վանը», սիրում են ասել իրենց աշխարհի մասին նկատի առնելով այն, որ Վասպուրականը ամբողջական աշխարհ է, իրենց բառերով ասած՝ «մի ամբողջ տիեզերք»:⁸⁰ (352; 350) Վանեցիների պարզ ըմբռնումներում Վանը նախաստեղծ խաղաղությամբ սրբազործված բնօրրան է, որտեղ աստծուց շնորհված հարուստ բնությունն ու մարդկային ստեղծարար ուժերը ներհյուսված ու տարրալուծված են միմյանց մեջ այնպես, որ դժվար է զանազանել բնական ու մարդկային ստեղծագործ ուժերի սահմանը: Այս է պատճառը, որ իրենց աշխարհի մասին խոսելիս վանեցիները ոչ թե ժամանակային բաժանումներով, այլ տարածական ընդգրկումով են խոսում: Ժամանակն այստեղ կարծես տարրալուծված է ինչպես բնության, այնպես էլ նրանում սփռված նախնիների կյանքն արձանագրած հետքերի մեջ.

Վասպուրական ա՛ն ա՛ն, երկիր որդոց մեծամեծաց, ուր կանգնած են, կանգուն ու անխաթար, ուրարտական ու խալդական անթիվ հուշարձաններ, հավիտյանս անբացատրելի արձանագրություններով, բևեռագրերով, խորհրդավոր ու մութ զարդանախշերով և նրանց մեջ՝ ատանավոր պարիսպներով ու համբավավոր, նրանց թագ ու պարծանք Վանի բերդը, որի միակտուր, քարե կացարաններում ապրել և ստեղծագործել են Սենեքերիմներն ու Գագիկները, մեծ թագավորներն Արծրունյաց աշխարհի, ուր Վարագն է բարձրանում որպես հավիտենական հուշակերտ Արծրունյաց հարստության, որի խորանում դամբարանն է Սենեքերիմ արքայի, ուր իսկապես ննջում է նա հավիտենական նինջով: (350)

Աշխարհի մասին այսպիսի պատկերացումների շրջագծում են ծնունդ առնում վանեցիների տոհմանունները: Վանի արհեստավորներն իրենց աշխատանքի սրբազործմամբ են ձեռք բերել իրենց տոհմանունները, ասենք՝ Դերձակյան, Բամբակզողյան, Թիթեղագործյան, Բրուտյան, Հացագործյան և այլն, իսկ նրանցից առաջնակարգերը, ինչպես Թերզիբաշյան, որ թարգմանաբար դերձակության վարպետ, և Բերբերբաշյան, որ վարպետ վարասավիր է նշանակում, հիմնել են իրենց տոհմերը: (351-352) Աշխատանքով իրենց սկզբին ամրագրած հասարակ այս խավն իր հետագծում նախաստեղծ ուժով օժտված դյուցազունների է նմանվում, որոնք միևնույն ժամանակ տարրալուծվել են տոհմային այն ըմբռնումներում, որ իրենց սկիզբը կապված է կյանքը հնարավոր դարձնող ստեղծարար աշխատանքի հետ: Այս հենքի վրա էլ ձևավորվում է պատկերացումը, թե Վասպուրականը, որ կազմված է «վաս», «պուր» և «քյան» արմատներից, թարգմանաբար նշանակում է «երկիր որդոց մեծամեծաց»: (353)

⁸⁰ Հայերի՝ իրենց տունը որպես տիեզերք պատկերացնելու մասին տե՛ս մարդաբան Լևոն Աբրահամյանի ուսումնասիրությունը, Levon Abrahamyan, *Armenian Identity in a Changing World* (Costa Mesa, Mazda, 2006), էջ 148-155: Նույնի հայերեն թարգմանությունը տե՛ս *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, Վարդան Ազատյան (թրգմ.), <https://bit.ly/3Cv4APN>, այց՝ 12 դեկտեմբերի 2022 թ.:

Վանեցիների հայացքում խոնարհ այս աշխատավորները, «որոնք քաղաքի բարօրության և վայելչության զարկերակներն էին ու զարկ տվողները, որոնք տքնում էին սիրով ու ջանասիրությամբ, ներքուստ անհանգիստ ու զգաստ այդ խոնարհ հոգիները», միևնույն ժամանակ իրենց աշխարհի պաշտպաններն են վտանգի պահին: Աշխատանքային աղմուկի մեջ անգամ «մեծ վտանգի չարագուշակ շշուկների» հանդեպ զգայուն այս մարդիկ իրական վտանգի պահին մի կողմ են նետում իրենց գործիքներն ու զենք վերցնում՝ պաշտպանելու իրենց բնօրրանը: (353) Այս դասակարգի տիպական արտահայտությունը դարբին Արաբոն է վեպում: Նա իր օրահացը վաստակում է աշխատանքով և ինչպես ցանկացած աշխատավոր ունի ապրելու իր չափանիշը՝ վաստակել աշխատանքով ու վայելել վաստակածի չափով: Խաղաղասեր այս մարդը 1896-ին զինվոր է դարձել ու պաշտպանել հայրենի աշխարհը: Ուշագրավ է, որ Արաբոն այս դասակարգի այն տիպարն է, որը միևնույն ժամանակ ընդառաջում է Օհանեսի որդու՝ Սուրենի դարբին դառնալու և զենք պատրաստելու հետաքրքրությունները: Արաբոյի ըմբռնումների մեջ ամրագրված է տունը ոչ միայն աշխատանքով պահելու, այլ նաև զենքով պաշտպանելու աշխատավոր մարդու վաղեմի հավատալիքը: Նա թեև չի հավատում, որ առևտրականի զավակը դարբին կդառնա, բայց զենքի հանդեպ Սուրենի հետաքրքրությունների միջով նա տեսնում է նոր ժամանակները և հանգստացնում Օհանեսին՝ որդու հետաքրքրությունների հանդեպ ցուցաբերած անհանգստությունների համար. «Դու Սուրենի սիրտ մի՛ կոտրի, ժամանակի նշան ի, թող գիրք էլ կարդա, բարութի հե՛տ էլ խաղա: Խաղաղ եղանակից մի խաբվի, մեկ էլ տեսար արև երկնքից սև ձյուն, կարմիր անձրև թափավ»: (198-207) Արաբոյի մտքում 1896-ի դեպքերն են, երբ «ծեթ-պետ, մեր-մանուկ՝ կանգնան դիրքեր, տվին առան, Վանն ազատեցին»: (207)

Արաբոյի հավատամքը գրեթե բոլորիցն է Վանում: Անկախ հասարակական դիրքից, կրթությունից ու կարողությունից, վանեցիները *հավատում են Վանի ինքնապաշտպանությանը* ավելի լայն իմաստով, քան զինված պաշտպանությունն է: Տունն ու բնօրրանը պահելու սրբագործված վաղեմի հավատամքի մեջ, որը խարսխված է այն ըմբռնման վրա, թե հողն ու մշակը կապված են միմյանց անքակտելի կապերով, արդար է համարում հայրենի հողն ու տունը պահելու գործը, իսկ նրա պաշտպաններն անպարտելի են, քանի որ արդար գործ են անում: Այս է պատճառը, որ անգամ արկածախնդրորեն դաշնակցական շրջանակներին միացած Գևորգը Վանի ինքնապաշտպանության օրերին իր համար էլ անսպասելի այն համոզմանն է գալիս, որ. «Վանը պիտի դիմանա առանց շեֆերի, իսկ ժողովուրդն առանց շեֆերի հրաշքներ կարող է գործել»: (483) Գևորգի այս համոզման հիմքում նույնպես տոհմիկ աշխարհի ամբողջականության ուժի մասին վաղեմի պատկերացումն է, որի համատեքստում էլ վանեցիները կասկածում են «դրսեկ» գործիչների բերած «բարությանը»: Նրանք մտածում են, որ հեղափոխական գործիչները թեև «բոլորն էլ խանդավառ, բոլորն էլ երիտասարդ ու հավատավոր առանձին-առանձին արի ու բարի մարտիկներ են, բայց միասին կարող են քվեարկել հօգուտ չարի», քանի որ նրանց պատկերացումներում Վասպուրական աշխարհի պաշտպաններն իրենց իսկ հողուջրից ծնունդ առած մարդիկ միայն կարող են լինել:⁸¹ (305)

Վանեցիների հայացքում առահասարակ չարիքի հետ է կապված այն ամենը, ինչը գալիս է դրսից կամ նրա փոխաբերությունը հանդես եկող մեծ աշխարհից: Ըստ այդմ, դրսից եկած

⁸¹ Այս համատեքստում ուշագրավ հավելում է վեպի լրամշակված տարբերակում Փանոս Թերլեմեզյանի գործունեությանը վերաբերող հատվածը: Թերլեմեզյանն ինքն էլ որպես նորօրյա մի հսկա է երևում, որը տարբեր փորձությունների միջով անցնելով անպարտ է մնում, քանի որ իր կենսածններով կապված է Վասպուրականին: Տես էջ 570-600:

ցանկացած բան քանդում է տոհմիկ ընթացումների հաստատունությունն ու բաժան-բաժան անուն ամբողջական աշխարհը: Այդպիսի չարիքի աղբյուր էր նրանց աչքին Պոլիսը (պատահական չէ, որ այն համեմատվում է Սողոմ-Գոմորի հետ): (165) Ընթացումների այս համատեքստում չարիքի են վերածվում նաև հեղափոխական գաղափարները, որոնք որքան էլ ծնունդ էին առել հպատակության անտանելի պայմաններից, միևնույնն է, չարիքի աղբյուր են դառնում, քանի որ իրենց բերած նոր և խորթ համոզմունքներով դեմ էին դուրս գալիս ժողովրդական այն պատկերացմանը, թե չէր կարող մի աշխարհում խաղաղություն և բարօրություն տիրել, եթե մեկ հարկի տակ երեք կուսակցություն կար: (448) Այս համատեքստում վանեցիների պահպանողանությունը, որով նրանք դիմադրում էին դրսեկ երևույթներն ու ընթացումները, պայմանավորված էր նրանով, որ դրանք հարվածում էին հաստատված խաղաղ պայմաններում զարգացող համայնական ընթացումներին ու խարխլում առօրյա փորձով հաստատված ու սրբագործված բարոյական օրենքները: Այս է պատճառը, որ վանեցիների պատկերացումներում կյանքի շարունակությունն ավելին է նկատվում, քան զարգացման այն հեռանկարը, որը կապված էր խաղաղ աշխատանքով ապրելու համայնական ընթացումները քարոքանող անելով ազատագրվելու և ազատ հայրենիք ունենալու քաղաքական գործիչների պատկերացումների հետ: Վանի գլխին տեղացող կրակների տակ նստած, ունեցվածքի մեծ մասը կորցրած Օհանես աղան այսպես է պատկերացնում հայրենիքը.

Էս որ կասեն հայրենիք, հայրենիք, ի՞նչ բան է հայրենիք ըսվածը: Հայրենիք լավ է, որ ապահովություն լինի, լիություն, առատություն, վաճառականություն ծաղկի, արհեստներ բազմանան, հոտեր, նախիրներ լցվեն արոտատեղիներ, կյանքի աժանություն լինի, «Հին աստվածներ» խաղան, նարդի շրխկացեն... հայրենիք ասածդ այն պետք է լինի: Իսկ ի՞նչ հայրենիք է մեր հայրենիք, հափշտակություն, բռնաբարություն, խուզարկություն, սպանություն, ջարդ... Էս էլ եղավ հայրենի՞ք... Ինչի նման է էսպես հայրենիք: Ապրել բռնության տակ, անապահով, անունն էլ դնել «հայրենի՞ք»: Սխալ գործ է: Որտեղ հաց՝ այնտեղ կաց, որտեղ հաց՝ այնտեղ հայրենիք, – այս է տրամաբանություն: (491-492)

Վանեցու պարզ երևակայության մեջ հայրենիքն այլ բան չէ, փաստորեն, քան ստեղծարար աշխատանքով կյանքի ապահով շարունակությունը: Այս է պատճառը, որ նրանք մեղմ ասած չեն համակրում ո՛չ կուսակցական-գաղափարական պայքարը, եթե անգամ այն հանուն իրենց ազատության է, ո՛չ էլ որպես կայսրություն արդիանալու օսմանյան կայսրության ներդրած քաղաքականությունները: Եթե առաջին դեպքում վանեցիների համոզմունքն այն է, որ «ազգի փրկության գործը քոլոզականների կամ մի կուսակցության գործ չէ, դա ժողովրդական գործ է», (97) ապա կայսրության հատկապես զինվորագրման քաղաքականությունների հանդեպ նրանց վերաբերմունքն այն է, որ վանեցին չի ուզում կռվել. «Վանեցին ոսկերչություն անի, վանեցին արհեստներ և առևտուր ծաղկեցնի, վանեցին «Արցունքի հովիտ» բեմադրի, ախպորս ասեն՝ ժրաջան մրջյունի նման աշխատի՛, կյանք ստեղծի, վանեցին չի ուզում կռվել»: (362) Ընթացումների այս համատեքստում են իրենց գործունեությունը ծավալել փորձում Վան թափանցած կուսակցական գործիչները՝ հանդիպելով «տեղացիների» դիմադրությանը:

Գաղափարի մարտիկներն ու ընդլայն ընտանիքի իդեալը

Քաղաքական ազատագրության և ազգային հեղափոխական գաղափարները վեպում Մահարին ներկայացնում է Վան եկած դաշնակցական գործիչներ Արամի, Իշխանի, Վռամյանի և տեղացի Միհրան Մանասերյանի պատումների միջոցով: Վանեցիների և դաշնակցական գործիչների միջև հակասությունները վեպում ոչ այնքան կուսակցական-գաղափարական մակարդակում են ի հայտ գալիս, որքան կենսաձևերի ու դրանց սերտորեն առնչված այն ըմբռնումների, որոնց հավատում են հերոսները: Եթե վանեցիները հավատում են ստեղծարար աշխատանքով կյանքի ապահով շարունակության իդեալին, Վան թափանցած քաղաքական գործիչները հավատում են քաղաքական ազատագրության ճանապարհով ձեռք բերվող ինքուրույն ազգային կյանքի իդեալին:

Պոլսից Խեքա վանք եկած թուրք նորանշանակ մյուդուրի ազատամիտ կինը՝ Նանան, անակնկալի է գալիս գյուղի գերեզմանատան սակավաթիվ թմբերից: «Ինչո՞ւ այդքան քիչ են մեռելները», – հարցնում է նա վանքի տիրոջը՝ Վասպուրականի «դաշնակցական կոմիտե» Միհրան Մանասերյանին: «Որովհետև գյուղի բնակիչները չեն մեռնում բնական մահով, – պատասխանում է Միհրանը, – նրանք մեռնում են իրենց գյուղից հեռու, անհայտ վայրերում և մնում են անգերեզման»: «Իսկ ինչո՞ւ են հեռանում իրենց գյուղերից», – զարմանում է գյուղի բնությամբ և ուտելիքներով հմայված Նանան: «Նրանք գնում են արդարություն և ազատություն որոնելու ու մահանում են նրանք արդարության և ազատության ճանապարհին...», – բացատրում է Միհրանը: (272)

Աշխարհ տեսած Նանայի ու իր նեղ աշխարհի սահմաններում պարփակված Միհրանի միջև այս խոսակցությունն իր մեջ խտացնում է 20-րդ դարակազմի արևմտահայության դրությունը, որից ծնունդ էին առել ինչպես ազատագրական շարժումները, այնպես էլ դրանց հենքի վրա ձևավորվում ազգային կուսակցությունները:⁸² 19-րդ դարակեսին Արևելյան հարցի շրջանակներում հայկական գավառներում Օսմանյան կայսրության իրականացրած բարենորոգությունների արդյունքում սրվել էին սոցիալական խնդիրները, ինչն իր հերթին ծնունդ էր տվել անվերջանալի մի պանդխտության՝ այս համատեքստում սրելով նաև ազգային հարցերը:⁸³ Գյուղը դատարկվում էր իր զավակներից նախ՝ ընտանիքի հոգը հոգալու, ապա ինչպես Միհրանն է ձևակերպում, մեծ աշխարհում «արդարություն և ազատություն որոնելու» հույսով: Արդարության ու ազատության որոնումներով հայրենի օջախից հեռացած հայ մարդը մաշվում ու տարրալուծվում էր օտար աշխարհի մեջ՝ առանց հայրենի տուն ազատության լույսը հասցնելու: Այս պայմաններում ու նաև այս դրությունը փոխելու հետ էին կապված 19-րդ դարակեսին ծնունդ առած ազգային ազատագրական բաղձանքները:

Վեպում ազգային կուսակցությունների՝ հատկապես դաշնակցության գործունեության ու վանեցիների միջև լարումները գերթե նույն հիմքերն ունեին, ինչ Մահարու և ընկերների

⁸² Ազգային կուսակցությունների ձևավորման սոցիալական պայմանների մասին տես, օրինակ՝ Աշոտ Հովհաննիսյան, «80-ական թվականների առաջին կեսի արևելահայ ազգային նարողնիկական խմբակները», *Բանբեր Հայաստանի արխիվների*, 1968, թիվ 2, էջ 127-146: Պատմաբանը ազգային կուսակցությունների գաղափարական տարամիտումներն իրենց ստեղծման պայմանների մեջ հանազամանալից քննության է արժանացնում նաև իր առայժմ անտիպ ուսումնասիրության մեջ, տես *Ուրվագծեր հայ 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ հասարակական-քաղաքական մտքի պատմության* (Մատենադարան, Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 2442, վավ. 1ա):

⁸³ Արևելյան հարցի շրջանակներում ազատագրական գաղափարների մասին տես, օրինակ՝ Hagop Barsoumian, «The Eastern Question and the Tanzimat Era», ըստ՝ Richard G. Hovannisian (խմբ.), *Armenian People from Ancient to Modern Times*, հ. 2 (New York: St. Martin's Press, 1997), էջ 175-202:

միջև ծագած վաղ մանկական «վեճերը»: Վանեցիները, եթե անգամ «չեզոքներ» էին, այսինքն՝ չէին հարուն երեք կուսակցություններից ոչ մեկին, ինչպես Օհանես Մուրադխանյանն ու նրա երկու ընկերները՝ Սիմոն և Փանոս աղաները, կողմ էին հաստատված կացութեանը պայմաններում զարգանալուն: Այս համատեքստում է, որ նրանք առաջադիմությունը տեսնում էին կենցաղը նորանվանություններով թարմացնելու ու բարելավելու մեջ՝ նոր կենցաղային իրեր և ուտեստեղեն կամ վարվեցողության նոր ձևեր ներմուծելով, բայց ոչ երբեք ընդունված ընտանեկան բարոյականությունը հարցականի տակ դնելով:⁸⁴

Թեև նորանվանությունները կենցաղային կյանք թափանցում էին հիմնականում հասարակականորեն բարձր կանգնած խավի ջանքերով և նրանք էլ հիմնականում դառնում էին դրանց կրողը, կենցաղում արտահայտված տարբերություններն իրենց ունեցած սոցիալական տարբերություններով հանդերձ, էական լարումներ չեն առաջացնում առավել պարզ կենցաղով ապրող վանեցիների ու զարգացած բարձր դասակարգի միջև:⁸⁵ Վանեցիների շրջանակում իրենց հարազատների հետ լարումներ են առաջանում Վան եկած քաղաքական գործիչների բերած «նորանվանություններին» հետևելու պատճառով: Այդպես օրինակ Քևրդի «մեծ-մեծ» բաներից խոսելը կամ Միհրան Մանասերյանի խեղա վանքի դեր դառնալն ու ամուրի, մեկուսի կյանքը անընդունելի ու կասկածելի էր երևում վանեցիներին հենց այդ պատճառով: Նրանք այսօրինակ կյանքը այլ կամ մեծ աշարհից եկած բարքերի դրսևորում ընկալելով է, որ դիմադրում էին դրանց:

Մեծ և վտանգաշատ աշխարհի հետ հարաբերության մի կարևոր եզրը վեպում սիրասեռային աշխարհն է: Իր անկանխատեսելի մղումներով այն անօրինակ արկածների է մղում ինչպես վանեցիներին, այնպես էլ «եկվոր» քաղաքական գործիչներին: Յամբարձումն, ինչպես տեսանք, զոհ է գնում հասարակաց տներում ձեռք բերած «գեշ հիվանդությանը», իսկ Միհրանի մասին լուրեր էին պտտվում, թե ծածուկ սիրային կապի մեջ է իրենց տանը ծառայող Քարմիլի հետ, մյուս կողմից՝ անդիմադրելի մղում ունենալով մեծ աշխարհից եկած ազատ վարքուբարքով մանկահասակ թրքուհի Նանայի հանդեպ: (274-275) Սրա կողքին, Օհանեսի օրինակով կարելի է տեսնել, որ ավանդական բարոյականությամբ ապրող վանեցիների կյանքում սիրասեռային հարցերը, պարփակված լինելով ընտանիքի ներսում, կարող են շղարշվել ընտանեկան կյանքի հաստատունությունը պահելու հազարումի եղանակներով: Նա, օրինակ, թեև հրապուրված է իր հարկի տակ հայտնված եղբոր կնոջ՝ Վերժինի կանացիությամբ ու միևնույն ժամանակ անտարբեր չէ վանեցի կանանց սքողված, բայց կանչող մարմնական շարժումների հանդեպ, բայց Վերժինին իր հարկի տակ ընդունելու սեռային մղումը սքողում ու կապում է կնոջը ընտանեկան հարցերում օգնելու «գործնականությամբ»: (538-543) Սիրասեռային հարցերը, ընտանեկան կյանքը կազմակերպելուն և ընտանեկան կյանքի ներսում աշխատանքի բաժանման տնտեսաեղանակներին սերտաճելով, բնորոշում են տոհմիկ բարոյականության վրա խարսխված կենսաձևերը, որի կողքին մի

⁸⁴ Այս առումով ուշագրավ է, թե ինչպես են բոլոր վանեցիները եռանդով վերցնում, կրկնում ու իրենց կենցաղ ներմուծում արմենական գործիչ Մուշեղ Բալտոշյանի հարսանիքին մատուցված կերակուրներից մեկը, օրինակ: (329-330)

⁸⁵ Այս առումով ուշագրավ մի հավելում է կատարել Մահարին վեպի լրամշակված տարբերակում՝ հեզանքով ցույց տալով վանեցիների զբաղմունքներն ու դասակարգային խավավորումը ու դրա կողքին կազմակերպված միասնական ազգային ինքնապաշտպանական ճակատը: (504) Ուշագրավ է նաև, որ բարեկեցիկ կյանքով ապրող խավը հյուրընկալության և հյուրասիրության երկու ձև ուներ՝ «ալաթուրքիա» և «ալաֆրանկա», որոնցից առաջինը համապատասխանաբար գորգապատ հատակին նստելով և ուտելիքը ձեռքերին հարմարեցրած եղանակներով ճաշակելով, իսկ երկրորդը՝ աթոռներով և համապատասխան պարագաների գործածությամբ էր արտահայտվում: Նրանք իրենց այցելած հյուրերին մեկ կամ մյուս ձևով էին ընդունում՝ կախված նրանց նախասիրություններից:

կողմից՝ թեթևամիտ, մյուս կողմից՝ վտանգավոր կարող էին երևալ այս կենսաձևերից շեղվող կենսաձևերը:⁸⁶

Այս համատեքստում չափազանց համարձակ են երևում Արամի սիրային կապերը ինչպես իրեն հյուրընկալած տանտիկնոջ՝ Ջարուհու, այնպես էլ ընկերոջ՝ Կոճա Դավոյի նշանածի՝ Մարինեի հետ: Առաջինի դեպքում այն հաճախ շղարշվում է հյուրընկալ ընտանիքի հոգատարությամբ, երկրորդ դեպքում մեծ ողբերգությունների պատճառ դառնում: Սիրային ու ընկերական դավաճանությունից վիրավորված Դավոն, ապաստանելով թուրք կառավարչի մոտ, մատնում է ընկեր գործիչներին և օգնում զինաթափել զենքերով լեցուն պահեստները՝ ի վերջո ինքն էլ սպանվելով Տաճատ Թերլեմեզյանի ձեռքով՝ որպես մեծ գործին դավաճանած մարտիկ: (288-311) Արամն իր անձնական կյանքում արտահայտված ազատություններով ուղղակի դեմ էր դուրս գալիս Վանում ընդունված ընտանեկան բարոյականությանն ու դրա շրջանակներում մշակված վարքաձևերին:

Այս պայմաններում է հենց ազատագրության գործը բարդությունների հանդիպում: Լարունի հիմնական կետը, ինչպես Մահարու և ընկերների «քաղաքական հակասությունների» դեպքում, «եկվոր» քաղաքական գործիչների և վանեցիների ընտանեկան կյանքի պատկերացումներից է ծնունդ առնում: Այլ կամ վանեցիների երևակայության մեջ մեծ աշխարհից եկած հեղափոխական գաղափարներին նվիրված գործիչները միանգամայն բնական էին համարում ազատագրության գործին տարբեր զոհողություններով ժողովրդի մասնակցությունը՝ նվիրատվություններից մինչև զենքի պարտադրված ձեռքբերում: Վանեցիներն իրենք էլ դեմ չէին ազգային գործին ցուցաբերվող զոհողությանը: Նրանք ավելի շատ վրդովվում էին դաշնակցականների մի կողմից՝ «ստեղծագործ», մյուս կողմից՝ ծածկամիտ պահանջագրերից: Ամեն դեպքում այդպես է բացատրում իրենց դիմադրությունը դաշնակցական գործիչների պահանջներից վրդովված Փանոս աղան. «Ազգ մենակ անոնց չի պատկաներ: ... Մենք պակաս չենք մտածեր ազգի մասին... թող մարդու պես կանչեն, բացատրեն, գումար նշանակեն, ստացականով վերցնեն, մեր ալ քոնթրոլով ծախսեն... Այս ինչ բարք է... ինչ սև քոլոզ, ինչ կարմիր քոլոզ... այս ինչ անպատվաբեր ձև է»: (54) Խոսքն, ուրեմն, ոչ զոհողության, այլ ներկայացվող զոհողության եղանակների մասին է, որոնք վանեցիներն այլ բարքեր համարելով՝ ընդդիմանում են: Նրանք իրենց տանը տեր լինելու զգացումով էին պատրաստ միանալ ազգային գործին և այս համատեքստում են ընդդիմանում նորօրյա լուսավորիչներին, որոնք թողել էին հայրենի օջախն ու որդեգրվել հայրենի աշխարհը ծանր լծից ազատագրելու նվիրական գործին՝ միևնույն ժամանակ իրենց որդեգրած անմշակ ձևերով և արտասովոր բարքերով ակամայորեն իրենց դեմ հանելով այդ աշխարհը կազմավորող ու հաստատուն պահող ուժերին:⁸⁷

Քաղաքական գործիչները, փաստորեն, ազտագրության գաղափարական իրենց նվիրվածության կշռով էին չափով էին վանեցիներին ներկայացվող պահանջները: «Հայրենի տան ապագա սյունը, հայրենի օջախի ծուխը» լինելով նրանք «թողել [էին] տուն ու օջախ, գնացել մութ մի աշխարհ նրան «գաղափարներ» հասցնելու»: (299)

⁸⁶ Աշխատանքի բաժանման գերդաստանային եղանակների մասին տե՛ս, օրինակ՝ Սամվելյան, «Հայ նահապետական գերդաստանը», *Արարատ*, 1908, ԽԱ տարի, համար 9, էջ 68-72:

⁸⁷ 19-րդ դարի հայ իրականության մեջ հեղափոխական ազատագրության լուսավորական ըմբռնումների համար տե՛ս, օրինակ՝ Աշոտ Գրիգորյան, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, հ.1 (Երևան: Հայպետհրատ, 1955); հ. 2 (Երևան: Հայպետհրատ, 1956), ինչպես նաև Աշոտ Գրիգորյան, «Ժան-ժակ Ռուսոն և նոր «բարոյական կյանքի» հույսերն ու տագնապները. Միքայել Նալբանդյան և Գրիգորյան Զամուռճյան», *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ* <https://bit.ly/3Cu7IAR>, այց 12 դեկտեմբերի 2022 թ.:

Ուստի, նրանց իդեալի դիրքերից իրենց գործը ոչ անձնական, այս իմաստով՝ ոչ նեղընտանեկան, այլ համազգային լինելով վեր էր կանգնում ամեն բանից, այդ թվում նաև ընտանեկան կյանքից: Այս համագամանքներում ազատագրության գործին նվիրվածությունը ձեռք էր բերում վերին ուժի հատկանիշ: Քաղաքական գործիչների պատկերացմամբ ազգային ազատագրությունը բացարձակ, իրենից վեր այլ ուժ չճանաչող գործ էր, որին ենթակա էր ամեն բան ինչ որ երկրային էր ու երկնային, այդ թվում նաև ընտանիքը:⁸⁸ Ազատագրության գաղափարն այսպես սրբացվում և օժտվում էր վերին կարողությամբ՝ վերածվելով «երկնային քաղաքականության»: Պատահական չէ, որ այս համատեքստում էր Արամը մտածում, թե. «Իսկապես, եթե չկա աստված, ինչո՞ւ ժամավաճառությամբ զբաղվել, իսկ եթե կա, ապա մենք նրան էլ պիտի լծենք՝ մեր աշխատանքը և պայքարը առաջ տանելու համար»: (212) Իրենց գաղափարներից ուժ առնելու և դրա մեջ գալիք կյանքի հույսը շոշափելու քաղաքական գործիչների հավատամքից էր ծնունդ առնում նրանց արմատականությունը, որը կամա թե ակամա դեմ էր դուրս գալիս հին՝ բնությանը ներհյուսված և սերունդների փորձով հաստատված կենսաձևերից ուժ առնող գերդաստանային ընտանիքի բարոյականությանը:

Այսքանով հանդերձ ուշագրավ է այն, որ դաշնակցական գործիչները ազատագրության իդեալը կյանքի կոչելու ճանապարհին կապվում էին վանեցի ընտանիքներին՝ որպես սեփական ընտանիքների: Վեպում Փարամազյանն, օրինակ, Օհանեսի մորը՝ Սրբուհուն հանդգնում է, որ քաղաքական գործիչները բոլորը նրա զավակներն են. «Մայրիկ, սրանք բոլո՞ր քո զավակներն են, էս՝ Վռամյանն ի, էս՝ Իշխանը, էս՝ Արամ, էս՝ Արմենակ Եկարյան ի, էս՝ բուլղարացի Գրիգորն ի, ես էլ Փարամազն եմ...»: (142) Այս համատեքստում հասկանալի է դառնում հանուն ազգային մեծ իդեալի քաղաքական գործիչների՝ վանեցիներից զոհողություն պահանջելու չափն անցնող անմիջականությունը: Այս «մեծ երեխաների»՝ ընտանեկան կապերի խզումով բացված ազատագրության գաղափարների հետևում բռնակալության տակ հաճող և սոցիալական անարդարություններին զոհ իրենց և հազարավոր ազգակից ընտանիքների հոգն է ծվարած:⁸⁹ Նրանց անեստրոնչ կյանքը սեփական զոհողություններով բարվոքելու նվիրական ցանկությունն էր ընկած ազատագրական գաղափարների հիմքում:

Այս համատեքստում է, որ ազգային ազատագրությունը քաղաքական գործիչները որպես նորոգված կապերով ընդլայն ընտանեկան աշխարհ են երևակայում, իսկ դրա ձախողումը՝ տնաքանդություն:⁹⁰ Ամեն դեպքում Վանի դատարկումն այդպես է ըմբռնում Արամը վեպի

⁸⁸ Այս առումով ուշագրավ է Միհրանի և թուրք պաշտոնյայի միջև խոսակցությունը: Տե՛ս էջ 254-257:

⁸⁹ Այս առումով ուշագրավ մի դրվագ է պահպանվել նաև Արամ Մանուկյանի հուշերում: Արամն հիշում է, թե ինչպես էին Վանում սովորական մարդիկ ընդդիմանում իրենց պահանջներին, քանի որ հաճախ դրանք ուղեկցվում էին ոչ միայն իրենց, այլ նաև Օսմանյան իշխանությունների կողմից բռնություններով: Ուշագրավ է, սակայն այն, որ նույն մարդիկ հետո երբ իմանում էին, որ նրանք թողել են «իրենց տուն ու տեղ, հէր ու մէր, եկել են «ազգի» համար», օրհնում էին նրանց, ասելով՝ «Եա՛, Տէր Աստուած, դու բարին բերես էս մարդկանց համար»: Արամ, «Յուշեր», *Հայրենիք*, 1923, թիվ 10, էջ 136-137: Պատահական չէ, որ թե՛ այս վկայության, թե՛ Մահարու հուշերում ու վեպում պահպանված դրվագներում հայ հեղափոխական գործիչներին իրենց հարկի տակ ընդունում են կանայք: Համայնական կյանքով ապրող հայ գյուղացի կնոջ երևակայության մեջ ընտանիքի բարօրության համար օջախից հեռացած իրենց որդիների ու ամուսինների օրինակով քաղաքական գործիչները ներս էին մտնում ընտանեկան շրջանակ ու այդ մակարդակում շոշափված անարդարություններին կապվելով թանձրացնում ազատագրության գաղափարը: Արամի հուշի այդ հատվածը համապատասխան մախաբանով տես նաև՝ *Հայկական արդիությունների ուսումնասիրման մախաբիժ*, <https://bit.ly/3QkBQiq>, այց 10 օգոստոսի 2022 թ.:

⁹⁰ Այս առումով ուշագրավ են Լևոն Աբրահամյանի ազգ-ընտանիքին վերաբերող դիտարկումները վերը նշված հոդվածում: Տե՛ս Abrahamyan, *Armenian Identity in a Changing World*, էջ 145-148: Այս մասին տես նաև նրա «Հայկական ազգ-պետություն», թե՞ ընտանիք-պետություն» բանախոսությունը, <https://bit.ly/3ifOSRZ>, այց 12 դեկտեմբերի 2022 թ.:

լրանշակված տարբերակի ավարտին:⁹¹ (676) Ուշագրավ է, որ հայերենում տնաքանդությունը սովորաբար գործածվում է այն դեպքերում, երբ նշում է մեկին հասնող կամ սպառնացող մեծ վնասը:⁹² Սակայն նույնքան ուշագրավ է և այն, որ մարդուն սպառնացող մեծ վնասն այս դեպքում ոչ թե մարդու անմիջական կյանքին, այլ նրա տանն է վերաբերում, այն աշխարհին, որի կերտողն ու պահապանն է մարդն ինքը: Այս հարթության մեջ, փաստորեն, քաղաքական գործիչների և վանեցիների ըմբռնումներն արձատապես հակադիր չեն միմյանց: Այս անկյունից դիտված՝ վանեցիների ըմբռնմամբ անքակտելիորեն իրար կապված Վանի ու վանեցու բաժանմամբ քաղաքը թեև շարունակում է «անշարժ ու անհաղորդ» կանգնած մնալ ու «նայում է կանաչ աչքերով՝ մի դեմքը դեպի անցյալ, մյուսը՝ գալիք դարերին», նա քանդվում է՝ իրեն *մարդկային աշխարհ* դարձրած կապերի քանդվելով: (681-682) Մյուս կողմից՝ Վանի կորուստը տնաքանդություն ընդունելով, քաղաքական գործիչներն իրենք *նույն տան զավակներն* են հանդես գալիս, որոնց առօրյա վարքուբարքում բեկվում է ներփակ ընտանեկան կյանքից սերող «ընտանեկան սոցիալիզմի» նրանց իդեալի խորը և ավերիչ հակասությունը:⁹³

Ամփոփում

1960-ական թվականներին, *Այրվող այգեստանները* լույս ընծայմանը հաջորդած հանրային քննարկումներից մեկի՝ հավանաբար Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտում կազմակերպված քննարկման ժամանակ պատմաբան Աշոտ Զովհաննիսյանը «Ad. Մահարու վեպը» խորագրով մի գրառում է թողել իր նոթատետրում: Նույն շրջանում ազգային կուսակցությունների պատմությամբ զբաղվող պատմաբանին այսպես է երևացել Մահարու վեպը. «Պատմության գեղարվեստական վերապատկերումը ավելի ճշմարիտ է, քան պատմաբանի գիտական փաստագրությունը, քանի որ բանաստեղծությունը թափանցում է երևույթների էությունը, մինչդեռ պատմաբանի ճշգրիտ հաշվետվությունը հանգում է սոսկ մանրամասների թվարկման»:⁹⁴ Զովհաննիսյանի նոթը քիչ բան է ասում այն մասին, թե պատմաբանը որքանով է հասու եղել Մահարու որբական փորձառության ներքին շրջափոխություններին և դրանցից ծնունդ առած այն լարումներին, որոնք պայմանավորել են հայ վիպագրության կոթողային գործերից մեկի ծնունդը 1960-ական թվականներին:

Պատմությունը որպես դիմամիկ կապերով զարգացող շարժում ըմբռնող պատմաբանի այս գրառումը պատմության իր ըմբռնման ծիրում գնահատելով 20-րդ դրասկզբին ազգային կուսակցությունների գործունեությունը պատկերող վիպային գործը՝ արձագանքում է Մահարու գեղագիտական այն հանդգնանքը, թե առանց «ողորքի ու

⁹¹ Արամի մտորումները ներկայացնող հատվածն ամբողջությամբ տե՛ս *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, <https://bit.ly/3GLzOor>, այց 10 օգոստոսի 2022 թ.:

⁹² Տե՛ս Ստեփան Մալխասյանց, *Հայերեն բացատրական բառարան* (Երևան: Հայկական ՍՍՌ Պետական հրատարակչություն, 1944), էջ 425:

⁹³ Ազգային կուսակցությունների սոցիալիստական գաղափարների մասին ուշագրավ են Աշոտ Զովհաննիսյանի հոդվածները, որտեղ պատմաբանը ազգային կուսակցությունների ձևավորումը միջազգային լայն պրոցեսների հետ դիմամիկ հարաբերության մեջ դիտարկելով՝ միևնույն ժամանակ նրանց սոցիալիստական ըմբռնումները քննարկում է ազգային ներփակ ըմբռնումների շրջանակում ցույց տալով դրանց խորքային հակասությունները: Տե՛ս օրինակ՝ Աշոտ Զովհաննիսյան, «Հնչակյանների կազմավորման գաղափարական արձատները», *Պատմա-բանասիրական հանդես*, 1968, թիվ 2, էջ 17-39, ինչպես նաև Աշոտ Զովհաննիսյան, «Արևելահայ լիբերալիզմի և մարդկության ներհակությունները ինստուևական թվականների սկզբին», *Բանբեր Հայաստանի արխիվների*, 1969, թիվ 2, էջ 63-81:

⁹⁴ Ըստ՝ Աշոտ Զովհաննիսյան, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը / Israel Ory und die Armenische Befreiungsidee* (Երևան: Զովհաննիսյան ինստիտուտ, 2016), էջ 664:

բողոքի» սզալով հայրենի աշխարհի կորուստը, նա դա անում է ի խնդիր ապագայի, «որովհետև պետք է լսել ոչ միայն անցած և ներկա սերունդների ձայնը և այն ստեղծագործաբար շարունակել և կատարելագործել, այլև պետք է կարողանալ կանխալսել գալիք սերունդների ձայնը»՝ նրանց հասցնելով «հետագա դեպքերի արագ ընթացքը»:⁹⁵ (387-388) Այրվող այգեստաններ վեպը գրելով Մահարին չէր սփոփում որբացման ու տնագրկման իր ցավը: Հակառակը: Խորհրդային Միության սամնաշունչ Բալթիկ ծովի ափից մինչև արևաշող Երևան թափառող հեղինակը ընտանեկան ու ազգային ողբերգությունը այն պայմանավորող հասարական, քաղաքական ու մշակութային համատեքստի մեջ ծավալելով՝ բացում էր ազգային կուսակցությունների մուտքով 20-րդ դարասկզբի հայոց կյանքի արդիացման բարդություններն իրենց կոնկրետության մեջ: Իսկ այդ կոնկրետությունն այլ բան չէր, քան տոհմիկ ըմբռնումներով ապրող վանեցիների ու դրանք ընդլայնելով հեղափոխել փորձող քաղաքական գործիչների ըմբռնումների միջև ծնունդ առած հակասությունների բնույթը շոշափելը, որը լայնորեն բացվել էր նրան 1960-ական թվականներին՝ ստալինյան ճամբարներով անցնելու և ազգային հարցերը պատկերելու տարամիտող գրական մտայնությունների համատեքստում:

⁹⁵ Հովհաննիսյանի պատմաբանության տարբեր երեսների մասին տես Վարդան Ազատյան, ««Ոչ եղիցի չեղեալ, գոր ինչ եղևն»․ Աշոտ Հովհաննիսյանի ավարտաճառը և նրա գործուն պատմաբանությունը», ըստ՝ Հովհաննիսյան, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը*, էջ 662-667: